Պատմվածք, Արձակ, Հայ գրականություն

16+

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ

1

Բասենի դաշտը կտրելուց հետո դեպի ռուսաց հողը տանող տարածությունը հանգում է նախ մի երկար կիրճի, որ արևելքից արևմուտք է պարզված, հետո սկիզբն է տալիս Քեռսե–դաղ կոչվող ամեհի լեռնաշղթային:

Լեռնաշղթան իր հովիտների և մացառոտ կողերի մեջ պատսպարում է միմիայն վայրենի կենդանիներ և մարդկային վայրենի ցեղեր: Ամառը վերևում, ձմեռը ձորերում՝ այդ ցեղերը ավելի անմատչելի են դարձնում լեռնաշղթան:

Անցորդը լեռնաշղթայի մեջ ժամերով ո՛չ մի շնչավոր էակի չէ հանդիպում. ապառաժ, ձյուն, արտուճի մացառներ, սոսկալի անդունդներ, երբեմն սքանչելի վայրենությամբ խորշեր, որոնք խոր, սոսկացնող լռություն են պահում և մի–մի անգամ միայն իրենց խորքերից վեր են վիժում մի գետակի կարկաչ, մի վայրենի թռչունի կծու աղաղակ կամ գայլի ոռնոց:

Այդպես է Քեռսե–դաղը: Ավելի սոսկալի է նա ձմեռվա ամիսներում, երբ ձյունը միօրինակ սպիտակ սավանով ծածկում է այդ բոլոր վայրենությունը, տեղ-տեղ ցույց տալով ապառաժոտ կողերի սևությունը և տեղ-տեղ էլ որևէ ժայռի սուր ծայրը: Ով մի անգամ իր կյանքի մեջ փորձել է անցնել այդ կողմերից, նա անշուշտ մոռացած չի լինիլ ահավոր լեռնաշղթան:

Այդտեղ էր ահա, լեռնաշղթայի գլխավոր գագաթից ոչ հեռու, որ մի ցուրտ ու մութ գիշեր, բլուրն ի վեր էր մագլցում մի ճանապարհորդ:

Մենակ, հրացանը գավազանի տեղ գործածելով՝ ծանրաքայլ բարձրանում էր: Ձյունի սառած շերտերը խշրտալով փշրվում էին նրա ոտքերի տակ:

Հոգնած էր. շատ էր քայլել. շունչը կտրվում էր: Բլուրի գագաթը երևում էր ձյունի սպիտակության շնորհիվ: Եվ ճանապարհորդը մի վերջին ճիգ ևս գործելով՝ մագլցեց ու հասավ կատարին:

Այնտեղ նա իջնող զառիվայրի գլխին նստեց, հրացանի կոթը գետնին դրավ, կռթնեց փողի վրա և սկսեց դիտել:

Գրեթե ոչինչ չի երևում: Մի անհուն սևություն, որ տեղ-տեղ խորքում, ծածկված էր մի քանի փայլուն, կարմիր բծերով:

Սահմանագլխի և բլրի ստորոտում գտնվող գյուղի կրակներն էին: Եվ այդ գյուղը անշուշտ քուրդի գյուղ էր:

Սև ամպերից կազմված միապաղաղ մի ծածկոց էլ երկնքի երեսն էր թաքցրել. աստղի նշույլը իսկ չկար։ Բնության խուլ շշուկը ծփում էր անդունդների վրա և անհետանում անսահման տարածության մեջ։

Ճանապարհորդը կռացավ դեպի ցած և լարեց լսողությունը. թվաց, որ լսում էր շների ձայն. բայց այնքան խուլ, անորոշ, որ նրանց որ կողմից գալը անհնար էր որոշել։

Սահմանագլխի մոտ էր։ Այդ նա գիտեր։ Բասենում նրան ասել էին, որ եթե կրակներ տեսնե, ապահով թող լինի, որ սահմանագլխի վրա է։

Ուրեմն, այդ սևության խորքումն էր ահա, որ գտնվում էր այն երկրի սկիզբը, որի մասին իրենց մոտ այնպես ցանկալի երազներ էին տեսնում. ուր, ասում էին, ոչ քուրդն է հափշտակում անպատիժ, և ոչ էլ կոպիտ ուժը հաջողվում ձեռնամուխ լինել մարդուս նվիրական սեփականությանը...

Ուրեմն, փոքր մի ևս, և նա ոտքը պետք է դներ այդ հողի վրա։

Բայց նա չէր եկել այդ երկիրը մտնելու։ Նրա համար այդ միտքը էլ գրավիչ չէր։

Նրա մտադրությունը այն չէր, որ խուսափեր իր դառնություններով լի երկրից և գնար այնտեղ, ուր ասում էին, մարդիկ ազատ են և ապահով, և ուր բարի, գթոտ մարդիկ կային։ Բարի մարդկանց պետք չուներ նա, ոչ էլ օգնության։ Թշնամին նրա մեջքը դեռ չէր տեսել. նրա հրացանի գնդակը կամ դաշույնի հարվածը պարապ չէր անցել։ Մշո լեռների կտրիճ զավակն էր նա՝ Գոմեր գյուղացի Պետրոսը, որին ոչ մեկը անպատվել կամ ծուռ աչքով, մինչև այդ ժամանակ նայել չէր համարձակվել։

Ո՛չ, նա չէր կամենում գնալ մյուս թուլամորթների պես՝ խուսափել հարվածողից... Ո՛չ, նա թողել էր երկիրը, քայլել էր երկար, տաժանելի ճանապարհներ էր կտրել, որովհետև իր նշանածին էր որոնում, իր սիրելուն, իր Նազիկին։

Ո՞ւր էր նա այժմ, իր ծնողների և համագյուղացիների հետ. երկրի ո՛ր լեռների մեջ ապաստանած կամ ո՛ր ճանապարհի վրա ընկած, սպանված...

Դրանից քսան օր առաջ Բուլանըխից Մուշ վերադառնալով՝ աչքի առաջ ուներ, որ Գոմեր կհասնի և տարիներով փայփայած երազը կիրագործի, որ Նազիկին կունենա վերջապես։ Խոստացել էին պսակը այդ ձմեռ կատարել։

Նա սիրում էր Նազիկին, և աղջիկը պաշտում էր նրան։

Նրանք երջանիկ էին։ Պետրոսը ոչ մի մռայլ բան չէր երևակայում Բուլանըխից վերադառնալիս։ Քրդերի արածները սովորական էին եղել։ Ասում էին, որ Մուշի դաշտում քուրդերը, աշիրաթներն իսկ, ավերում էին գյուղեր և օրեցօր սաստկացնում այդ ավերածությունը. որ կոտորում են, փախցնում... Բայց Պետրոսը այդ բոլորը նոր չէր, որ լսում էր. ծնվելուց ի վեր նրա ականջները վարժվել էին այդ բոլորին։

Եվ այդպես, միշտ վարդագույն հույսերով Բուլանըխից Մուշ եկավ, սրտատրոփ Գոմեր վազեց իր նշանածին տեսնելու, բարեկամներին համբուրելու...

Բայց երբ գյուղ հասավ, ի՞նչ տեսնե...

Սասնո Բաքրանցի քուրդերի ցեղապետը, ահա թե ինչ պատմեցին նրան, ուզել էր տանել Նազիկին, հավանելու էր բարեհաճել նրան։ Վրթնոն՝ աղջկա հայրը, այդ լսելով, մի գիշեր հանկարծ առել էր իր ընտանիքը, շալակել էր ինչ որ կարողացել էր և փախել գյուղից: Սպանվել էին և տանջանքի ենթարկվել ոչ միայն Նազիկի, այլև իրեն՝ Պետրոսի, ազգականները, որովհետև Յուսուֆ աղան գիտեր Նազիկի նշանված լինելը և կարծել էր, թե աղջկան հեռացնողը Պետրոսն էր:

Գոմերը գրեթե ավերվել էր:

Այդ բոլորին հետևել էր մի ընդհանուր ավերածություն:

Յուսուֆ աղային միանալու էին եկել ուրիշ քուրդ ցեղեր ևս, և Մշո դաշտի գյուղերը միմյանց ետևից թալանվում, ավերվում ու այրվում էին...

Ահա թե ինչ դրության մեջ գտավ Պետրոսը իր հայրենիքը:

Մի մեծ հուսահատություն ճնշեց վայրկենապես նրա սիրտը. երկնքից գետին էր շպրտված։ Այլևս չկար ո՛չ երազների և ո՛չ վարդագույն օրերի իրականացման հույսը... Այնտեղ, իր առջևն էր միմիայն՝ ավերակ, մոխիր ու սուգ:

Եթե չէր գժվել, պատճառն այն էր, որ նրան կարողացել էին գոնե ասել, թե դեպի որ կողմն էին գնացել գյուղից խուսափածները, որոնց մեջ էին Վրթնոն և Նազիկը:

Եվ նա թողել էր ամեն ինչ, անցել դիակների վրայից, ավերակների կողքից, առել էր հրացանն, ու որդին կորցրած մոր կատաղությամբ՝ սար ու ձոր էր ընկել նշանածին գտնելու:

Ասել էին, որ խումբը դեպի Խնուս էր գնացել և այնտեղից մտադիր էր սահմանն անցնել:

Եվ երբ մի րոպե պատկերացնում էր իր քնքուշ Նազիկին, որ այժմ ցրտի, ձյունի մեջ, գուցե ոտաբոբիկ և կիսամերկ քայլում էր, գուցե անոթի կամ մուրալով խուսափում էր քուրդերից և ստիպված էր փշերի, քարերի միջից փախչել, ճանապարհ որոնել... երբ այդ բոլորը երևակայում էր, դառնությունը խեղդում էր նրան, կրծում սիրտը...

Ասել էին նրան, որ Կովանդուկի վրայով էր անցել գաղթականությունը։ Բայց ո՞ր ճանապարհով. արդյոք տեղ հասե՞լ էին անվտանգ. անոթությունը կամ քուրդերը նրանց չէի՞ն ջարդել:

Նազիկը կարողացել էր դիմանալ ցրտի, հոգնածության... կարողացե՞լ էր քուրդերից ազատվել... Ոչինչ չգիտեր և այդպես անգիտակ Խնուս իջավ:

Հարցրեց ամենքին։ Ոչ ոք չէր կարողանում ասել հատկապես, թե խմբի մեջ եղել էին Վրթնոն, Նազիկը։ Տեսել էին Մշից հասած շատ թշվառների՝ անոթի, ծարավ, ցրտից գրեթե սառած, որոնք միացել էին Կովանդուկից, Կարա–չոբանից և Խնուսի այլ գյուղերից դուրս եկած զանազան փախստականների հետ և որոնք ծածուկ ճանապարհներով գնացել էին դեպի սահմանագլուխ:

Նրա մեջ մի քիչ հույս էր ծագել:

Քիչ հետո նրան ասացին, որ գաղթականներն այլևս այնքան ստվար խմբեր չէին կազմում, որ նրանք ցերեկով թաքնվում էին և գիշերները անցնում գյուղերի կողքերից:

Ասացին, որ քուրդերը հոտ էին առել և խմբեր էին կազմում գաղթականների վրա հարձակում գործելու համար, որ «Կըռ–սարդարի»–ները (ճանապարհը իբր թե պահպանող զինվորները) և Համիդիե կոչվող քուրդերից կազմված նոր զորքի խմբերն իսկ, լավ որս համարելով ընկնող թշվառներին, ասպատակ էին սփռել ամեն կողմ:

Հետզհետե այլևս ոչ ոք չկարողացավ Պետոյին ճիշտ տեղեկություններ տալ: Միշտ անորոշ էին պատասխանները: Շատերը վախենում էին և ուղղակի «չգիտենք», «չենք տեսել» ասելով՝ խուսափում էին: Ոմանք ասում էին, որ մեծ խմբերը բաժանվել են ավելի մանրերի և ցրվել սահմանագծի երկարությամբ, որպեսզի կարողանային աննկատելի մնալ սահմանապահ զորքերից: Ուրիշները կարծում էին, որ խնուսցիք մշեցիներից բաժանվել՝ ուրիշ ուղղությամբ էին գնացել, իսկ մի գյուղացի երիտասարդ կանչեց Պետոյին մի ախոռի մութ անկյուն և այնտեղ հայտնեց, որ մշեցիք մտել են Քեռսե դաղ լեռների կիրճերը և հույս ունեին այն կողմերից անցնել սահմանը:

Կանգ առնելը նրան ավելի անհանգստացնում էր. կարծում էր, որ Նազիկը կանչում էր իրեն, որ պետք ունե իրեն, որ նրա միակ պարտքն է վազել, շնչասպառ վազել, ամեն բանի վրայից ոստնելով՝ վազել, մինչև որ գտներ նշանածին: Ամեն անգամ կրակ տեսնելիս՝ կարծում էր, թե հասել է: Եվ վազում էր, ամենքին հարցնում: Որքա՜ն դժվար ճանապարհներ, որքա՜ն խոր ձորեր և որքա՜ն ձյուն, մացառ ու արգելք: Բայց կտրեց անցավ բոլորը. մագլցեց ժայռոտ, լպրծուն լեռներ, անցավ հոսանուտ հողով բլրակներ, ցեխոտ դաշտեր և ահա այժմ, մի ամբողջ ցերեկ քայլելուց հետո, չնայելով, որ հոգնած էր, անոթի, շնչասպառ, մի վերջին ճիգ ևս գործեց և հասավ Քեռսե–դաղի մեծ բլուրին, որտեղից ճանապարհը ոլորապտույտ տանում էր դեպի մի ինչ-որ հարթավայր և անծանոթ գյուղ:

Այդտեղ էր, որ կանգ առավ քիչ հանգստանալու. ի՞նչ գյուղ էր այնտեղ՝ ցածում. ո՞ւր էր հասել. ռուսա՞ց հողի վրա էր, թե՞ դեռ թուրք հող էր կոխում:

Ամեն ինչ անորոշ էր: Կուրացած ցավից, միայն մի նպատակ մտքում՝ քայլել էր. չէր էլ ուզել շատ տեղեկություններ հարցնել. հույս ուներ գտնել փնտրածին հոտառությամբ, բնազդմամբ:

Սաստիկ ցուրտ էր: Թե՛ հոգնած և թե՛ վհատված՝ չգիտեր այժմ ուր գնալ: Կարելի էր մտածել, որ այդ կրակները գաղթականներն էին վառել:

Մի քանի րոպե նա մնաց այդպիսի անորոշ դրության մեջ նստած: Ցածում կրակները հետզհետե մարում էին. միայն մի տեղ, մի մեծ խարույկ՝ մնում էր երերուն և բոցավառ:

Վերջապես ելավ և վճռեց իջնել դեպի կրակը: Պետք էր տեսնել, թե ովքեր կային այնտեղ և այժմ գոնե տեղեկություն հարցնել: Հայեր լինեին, ավելի լավ, եթե քուրդեր լինեին, նա իրեն քուրդ կձևացներ և գուցե ավելի հեշտ տեղեկություններ ունենար գաղթող խմբերի մասին:

Հրացանը թևի վրա, ստուգեց, որ փամփուշտ կար, ուղղեց մեջքի երկար սուրը, ստուգեց, որ դաշույնը գոտու մեջն էր և սկսեց իջնել:

Բլուրը հողային էր. ձյունի շերտը փշրվում էր, և Պետոյի ոտը երբեմն փլեցնելով խճային մի հոսանք, մի քանի րոպեի շառաչյունով խզում էր գիշերային լռությունը:

Երբեմն ավելի պարզ էին լսվում շների ձայները: Խարույկը բլրի ստորոտումն էր և մեծանում էր:

Նա սկսեց քայլերն արագացնել և լսողությունը սրել:

2

Շատ վտանգավոր բան էր Պետոյի արածը. չէ՞ որ հայտնել էին նրանք Քեռսե–դաղի բնակիչների մասին, թե նրա ձորերի մեջ ու ապառաժների տակ, մացառոտ անտառակների կողքին, ինչպես և կիրճերն ու հովիտները, լի էին միայն արյունարբու, վայրենի քուրդերով, որոնք մարդ էին սպանում այնպես, որպես սպանում են ճանճերի:

Գիտեր այդ. սակայն չէր կասկածում. մտածում էր գաղթականներին հանդիպելու: Իսկ եթե քուրդեր լինեին այնտեղ երևացող խարույկի մոտ, նա առաջին անգամը չէր լինիլ, որ քուրդերի միջից ողջ-առողջ անցնելուց բացի, մինչև իսկ նրանց մոտ համարվել էր աշիրաթի՝ ազնվական քուրդի զավակ:

Քսաննհինգ տարեկան, երկարահասակ ու լայնալանջ, սևադեմ ու խրոխտ, սև արտահայտիչ աչքեր՝ խիտ հոնքերի տակ, ճապուկ մարմին ու վայելուչ կազմվածք, այդ բոլորը նրան նպաստում էին ինքզինքը իբր ազնվական քուրդ ներկայացնելու: Բացի դրանից, նրան ասել էին, թե ինչ ցեղեր են բնակվում այդ կողմերում, և նա գիտեր այդ ցեղերի բնությունը:

Վախենալու ուրեմն ոչինչ չկար: Հանդգնություն էր միայն հարկավոր: Եվ նա առաջ անցավ՝ միշտ հրացանը պատրաստ բռնած: Շների ձայները սաստկացան, հետո խարույկը մի բոց արձակեց և ապա լսվեց մի մարդկային ուժեղ ձայն, որ գոչում էր.

— Ո՞վ է այն:

Քուրդերեն էր հարցը: Պետոն կանգ առավ: Շներն այդ ժամանակ դադարեցին հաչելուց, իսկ ձայնը նորից լսվեց, որ այս անգամ հարցնում էր.

— Բարեկա՞մ է, թե թշնամի:

Պետոն աջ ձեռքը շեփորաձև բերնին դրեց, կռացավ և նույն լեզվով պատասխանեց.

— Բարեկամ է:

Դրանից հետո լռեց ամեն ինչ մի րոպե: Երիտասարդը համարձակ քայլերով իջավ ցած, երբեմն դիտմամբ ավելի խշրտացնելով ձյունի շերտերը:

Քանի մոտենում էր, ավելի պարզ տեսնում էր մի քանի ստվերներ, նույնիսկ խրճիթների պատեր: Քուրդերը մթան մեջ ծածկվում էին, անշուշտ հրացան ի բռին: Պետոն նույնպես աշխատեց լույսից խուսափել և երբ բավական մոտեցել էր, կանգ առավ և գոչեց քուրդերեն.

— Ինչո՞ւ են Կրմանջները մթության մեջ մնում. բաքրանցի Ռզկոն արդյոք թշնամի ցեղի հե՞տ գործ ունի:

Բայց ոչ ոք նրան չպատասխանեց։ Պետոն երկու քայլ էլ արավ և մտավ լույսի մեջ:

— Լավ ուրեմն,— ասաց նա խրոխտ,— թշնամի կամ բարեկամ, եթե նամարդ եք, առանց դեմուդեմ գալու խփեք մենակ մարդու:

Այդ կծու խոսքերը ազդեցություն ունեցան. իսկույն լույսի մեջ երևացին մումիաձև, առանց թևերի երկու անձինք:

— Բաքրանցիները մեր բարեկամներն են,— ասաց մեկը, համեցեք. սեր սերան, սեր ճնան[1]... ո՞ր կողմերից է գալիս իմ եղբայրը:

Խոսողը, նաև հետզհետե լույսի մեջ ելնողը հինգ–վեց քուրդ, փաթաթված էին անթև թաղյա հաստ վերարկուների մեջ, գլուխներին թաղյա քեռլոզ և զինված էին ընտիր մարթինի հրացաններով:

Պետոն մի հայացքով զննեց բոլորին. ո՛չ մի դեմք պարզ չէր երևում. ծածկված էին վերարկուի լայն օձիքով:

— Մուշի երկրից եմ,— ասաց նա:

— Շատ հեռվից է գալիս իմ եղբայրը,— խոսեց մի ուրիշ քուրդ,— բայց մեր գլխի, աչքի վրա։ Իմ եղբայրը բաքրանցիների ցեղապե՞տն է:

— Բաքրանցիների ցեղապետը,— ասաց Պետոն,— իմ հայրը, հռչակավոր Յուսուֆ աղան է. իսկ դուք ինչ ցեղից եք:

— Խնուսի շեյխի մարդիկն ենք,— պատասխանեց առաջին քուրդը միշտ թաղիքի միջից,— շեյխը սիրում է բաքրանցիներին. մենք լսել ենք Յուսուֆ աղայի անունը... իմ աղան եթե հոգնած է և քաղցած՝ գյուղը իրն է, մեր աչքի ու գլխի վրա է եկել:

— Վաղուց է ոտքի վրա եմ,— խոսեց Պետոն,— եթե իմ եղբայրները մի կտոր հաց տան, շնորհակալ կլինեմ:

Քուրդերից երկուսը դարձան դեպի խրճիթները. Պետոն հրացանը ամենայն վստահությամբ ուսին ձգեց և հետևեց նրանց, իր ետևից գալիս էին նաև մյուս քուրդերը, և այդպես շրջապատված նա մտավ մի խրճիթ։ Ոչ ոք չփորձեց հարցնել, թե ինչպես մի ցեղապետի որդի, առանց ձիու, ոտքով և առանց ընկերակցի՝ գտնվում էր գիշերով այդ կողմերում։ Երևի հետո պիտի հարցնեին։ Եվ լուռ՝ ներս մտան:

Խրճիթը մի մեծ զոմ էր. մութ անկյուններից լսվում էին կենդանիների որոճի և ուտելու ձայներ. լայն բաժանմունքում մի լավ կրակ՝ լույս էր տալիս իր կողքին նստոտած երկու–երեք կանանց և գրեթե մերկ մանուկների:

---

[1] Գլխներիս, աչքերիս վրա:

Պետոն քրդական մի փոքրիկ, աննշան գյուղի մեջ էր և երևի նրա բնակիչները հասարակ հպատակներ էին. ահա թե ինչու իսկույն չէին համարձակվել հարցեր տալ, թե ի՞նչ գործ ուներ նա այդ կողմերում:

Երբ ներս մտան բոլորը, այդտեղ միայն Պետոն կարողացավ զննել իր հյուրընկալների դեմքը, որովհետև քուրդերը երբ կրակին մոտեցան և նստեցին, թաղիքը հանեցին և մի կողմը դրին:

Դաժան, սև, խորշոմներով ակոսված դեմք, բայց առույգ, կրակոտ և խորազնին կասկածող աչքերը արտահայտում էին միշտ լարված դրություն. նմանում էին ամեն րոպե վտանգի, կռվի սպասող անձերի: Նստելիս, ամեն մեկը հրացանը ծնկների վրա դրեց, հետո քիչ ձեռքերը կրակին պարզեց և ապա սկսեց զննել հյուրին:

Շրջապատել էին խարույկը, կանայք և մանուկները քաշվել էին մի մութ անկյուն և այնտեղից երբեմն, կատվի աչքերի պես փայլում էին մի զույգ հետաքրքիր աչքեր:

Ամեն ոք լուռ էր. խոսքը տան մեծին էր պատկանում, իսկ նա դեռ զննում էր իր հյուրին: Պետոն մտախոհ դեմք ուներ, բայց վստահությամբ նայեց բոլորին, հետո ավելի լավ տեղավորվեց և սպասեց: Անհամբեր էր իմանալու ինչ որ ուզում էր:

Որտե՞ղ էր գտնվում. սահմանից շա՞տ հեռու էր. ի՞նչ ուղղության վրա. գաղթականները ե՞րբ էին անցել և այլ այսպիսի բազմաթիվ հարցեր կուտակվել էին նրա գլխում: Մի քանի անգամ հարցական ակնարկով նայեց ալեխառն մազերով հյուրընկալին:

Վերջապես սա դարձավ, նայեց դեպի մութ անկյունը, հրամայեց հյուրին հաց տալ և ապա ասաց.

— Սեր սերան, սեր ճևան. մեր աղան շատ հոգնած կլինի. չի՞ կամենա, որ իրեն հանգիստ թողնենք:

— Օ, ո՛չ,— ասաց աշխուժով Պետոն,— իմ հայրը շատ բարի է. ես այնքան հոգնած չեմ. շտապում էլ եմ... իմ հոր անունը ի՞նչ է:

— Ֆնդո:

— Ֆնդո աղան եղե՞լ է Մշո երկիր:

— Ո՛չ. ես մինչև Խնուս, Կարա–չոբան գնացել եմ, բայց ո՛չ հեռու... լսել եմ, որ Մշո երկիր աստծո արքայության պես սիրուն է:

— Այո, մեր երկիրը սիրուն է: Բայց իմ հայրը լսե՞լ է, որ այժմ այդ երկրում կռիվ կա, որ բոլոր աշիրաթները ոտքի են ելնում:

— Լսել եմ,— ասաց քուրդը.— ֆլաները[2] մեզ լուր են բերում. դեռ այսօր էր, որ մի խումբ տկլորներ, առանց հացի ու կիսամեռ, անցան մեր գյուղից: Ոչինչ չունեին վարձատրելու առաջնորդի համար. մենք նրանց ճանապարհ ցույց տվինք: Կանայք էլ կային նրանց հետ... էհ, մարդու խեղճն է գալիս. ինչ կյանք է դրանց կյանքը. նամարդություն է նրանց այդ վիճակի մեջ դիպչել կամ վնասել... սառել էին. ոտները բոբիկ, մերկ... ոչինչ չունեին:

---

[2] Հայերը:

— Ֆլաները հարուստ են լինում,— մեջ մտավ մի քուրդ, որ նստել էր տանտիրոջ կողքին,— բայց խորամանկ են, իրենց հարստությունը ծածկում են:

— Չէ՛, Ռազախ,— պատասխանեց նրան Ֆնդոն,— ես էլ ֆլա շատ եմ տեսել, նրանց հետ շատ եմ գործ ունեցել. բայց նրանք, որ անցան քիչ առաջ՝ ոչինչ չունեին. դժվար թե տեղ էլ հասնեն. կեսը ցրտից, կեսն էլ անոթությունից կկոտորվեն. դեռ տեսնենք սահմանապահ զորքերը կթողնե՞ն նրանց անցնելու:

— Մի՞թե չեն թողնում.— հարցրեց Պետոն:

— Որտեղի՞ց... շղթա են կազմել ու ետ են մղում. սահմանագլխի գյուղերում, Դալի–Բաբայի վրայով գնացողները շատ են։ Մի կերպ անցել են, բայց շատերը հենց ցրտից կամ քաղցից տեղնուտեղը ընկնում են։ Իմ եղբայրը չգիտե՞, որ Մշից եկածները ոչինչ չունին:

— Ես այդ գիտեմ,— հարցմանը պատասխանեց Պետոն,— բայց չգիտեի, որ սահմանապահները չեն թողնում անցնելու:

— Այո, չեն թողնում,— պնդեցին մյուս քուրդերը:

— Իսկ այս կողմից անցնողներ շա՞տ կան:

— Առաջ ոչ այնքան,— պատասխանեց մի երրորդ քուրդ,— իսկ այժմ անցնում են, որովհետև արգելվում են մյուս կողմերից և թե Արփաչայի ձորում թալանվում են, սպանվում:

— Նրանց թալանողները նամարդներ են,— գոչեց ուժգնությամբ տանուտերը,— ընկածին չեն խփիլ:

— Հասնանցիներն են,— ասաց տանտիրոջ փոքր եղբայրը,— բոլորովին մերկացնում են, շապիկն անգամ հանում են...

— Սարսափելի է,— ասաց զայրույթով Ֆնդոն,— էլ տղամարդություն չէ մնացել քուրդի մեջ, էլ ոչ ոք չէ հիշում, որ «ադար ըժդին չէտըրա (ամոթը կրոնից առավել է)... էլ ամոթ չմնաց քրդի մեջ. ինչ անենք, որ գյավուր են:

— Մեր շեյխը ավելի լավ է և արդար է վարվում,— ասաց չորրորդ քուրդը,— առնում է ամեն ինչ որ ունին այդ ֆլաները, հետո առանց վնասելու՝ բաց թողնում:

— Ֆլաները լավ աշխատում են,— ասաց մի քուրդ,— նրանք աշխատում են մեզ համար. սիրուն կանայք էլ ունին:

— Եղբայրս ճիշտ ասաց.— ծիծաղեց Պետոն,— ֆլաները սիրուն կանայք շատ ունին... եղբայրս տեսե՞լ է սկի։ — Շա՛տ... Խնուս, Բասեն:

— Իսկ անցնողների մե՞ջ.— հարցրեց Պետոն անձկությամբ — օրինակ հենց այսօրվա անցած խմբի մեջ:

— Ռազախը նրանց չտեսավ.— ասաց Ֆնդոն,— բայց ես տեսա, երկուերեք հատ շատ սիրուններ կային. մերոնք ուզեցին վերցնել, ես չթողի։ Ես չեմ ուզում, որ մեր կողմից անցնող կանայք անպատվության ենթարկվեն։ Ես Շեյխի մարդ եմ. առանց էն էլ՝ կնիկ պահելը շատ

դժվար է այս կողմերում. անպատվել մի թշվառի, որ ցրտից ու քաղցածությունից մեռնում է, սրանից վատթար նամարդություն չէ կարող լինել...

Պետոն այլևս չէր լսում քուրդի խոսքերը։ Մտքով անցնող խմբի հետ էր։ Աչքի առջև պատկերացան իր Նազիկը կիսամերկ. ձյունը կոխելով, ոտաբոբիկ և քաղցած, ամեն րոպե ենթարկված լինելով դեռ՝ անպատվության իսկ... իսկ ինքը, նրան սիրողը, մի քանի քայլ հեռու միայն և անշարժ նստել էր ու կարողանում էր տանել քրդերի խոսակցությունը։

Ֆնդոյի խոսակցությունից հետո բոլորն էլ լռեցին։ Քուրդերը նկատեցին, որ Պետոն մտածում էր, տեսնում էին նորա դեմքի ցավագար, կծկվող արտահայտությունը, հուզումը։

— Իմ աղան մի ցավ ունի՞,— հարցրեց տանուտերը,— մենք ունինք դարմանող պառավներ... կամ վիրավորվա՞ծ է արդյոք...

Երիտասարդը ցնցվեց։ Ձեռքով տրորեց ճակատը, շուրջը մի ակնարկ ձգեց և հանկարծ ոտքի ելավ։

— Ո՛չ,— ասաց նա,— վիրավորված չեմ։

— Եղբայրս ուզում է գնա՞լ արդեն։

— Այո՛,— ասաց նա մտամոլոր,— ուզում եմ... Միայն ինձ ասեք, թե այդ ձեր հիշած այսօրվա խումբը ի՞նչ ճանապարհ բռնեց։

Ոչ ոք չպատասխանեց իսկույն։ Զարմացմամբ զննեց քուրդերին և հանկարծ նկատեց, որ նրանց մեջ կասկած էր զարթնել։ Շտապեց ուղղել սխալը՝ պարզելով իր հարցի նպատակը։

— Ես պետք է գնամ նրանց ետևից,— ասեց,— որովհետև երկու տարի է, որ ուզում եմ մի ֆլա աղջկա. այդ աղջիկը անցնող խմբի մեջ պիտի լինի։ Մշո դաշտից այստեղ եմ եկել միմիայն նրան ձեռք ձգելու համար։

— Վա՛հ, —ասաց մի քուրդ,— մի՞թե այդքան սիրուն ֆլա աղջիկ կար նրանց մեջ, ափսոս ես չտեսա։

— Իմ աղան շատ ջահել է,— ժպտեց տանուտերը, — Ֆլա աղջիկը չարժե, որ դու նրա համար Մշո դաշտից այսքան տեղ գայիր։ Բայց եկել ես. և եթե ուզում ես հասնել, քեզ պետք է շտապել։ Սահմանը շատ մոտ է. Քեռսեդաղի գագաթը մեր գյուղի մեջքն է. իսկ այդ հաստ ու լայն մեջքի ետևումն է ռուսաց հողը... խումբը պտույտ կգործի սարի լանջի վրայից և աջ կողմով կիջնի մյուս ստորոտը։

— Ուրեմն ես աջ կողմո՞վ պիտի գնամ։

— Նախ ուղիղ և ապա միշտ ձախ՝ ու ներքև... Ձյունի վրա իմ աղան կտեսնի նրանց հետքերը. իմ աղան թող շտապի, եթե ուզում է հասնել նրանց։

Պետոն թևին ձգեց հրացանն ու քայլեց դեպի դուռը։ Բոլոր քուրդերը նրա հետ դուրս գնացին և նորից մոտեցան բոցավառ խարույկին։

— Ահա՛,— ցույց տվեց հյուրընկալը ձեռքը դեպի աջ պարզելով,— քիչ եթե այդպես ուղիղ գնաս, ոտքերի տեղերը կտեսնես... Աստված քեզ հետ:

— Իմ եղբայրը չի՞ կամենալ, որ մեզնից մի քանիսը ընկերանան իրեն,— հարցրեց մի քուրդ:

— Ո՛չ,— շնորհակալ եմ,— պատասխանեց Պետոն, բարևեց և արագ քայլերով մտավ մթության մեջ:

Գյուղը շատ փոքր էր: Նա շուտով լեռան կուրծքին հասավ և սկսեց վազել:

Անհամբերությունից դողում էր. էլ ոչինչ աչքին չէր գալիս. ոչ քար և ոչ փոս: Մտքով նա ավելի առաջ էր: Մի բան իրեն ասում էր, որ այդ խմբի մեջն է լինելու Նազիկը: Ուրեմն այդքան մոտ էր իր սիրելուն. պետք չէր մի րոպե ուշանալ. պետք է թռնել դեպի նա, շալակել նրան իր ուսերի վրա, մերկ ոտքերը առնել իր ձեռքերի մեջ, տաքացնել. հագուստովը ծածկել նորա մարմինը, լեռներն ու ձորերը տակն ու վրա անել, երկնքի երեսից թռչուն ցած գլորել՝ կերակրելու համար ... պահպանել նրան, նրա կողքին լինել միշտ, ապրել, շնչել նրա օդը, նրա սիրով կյանք վայելել...

Թռչում էր փոսերից առանց կանգ առնելու. բարձրանում էր, սահում էր սառած ձյունների շերտերի վրայից:

Գյուղը ետ մնաց, շների ձայները անլսելի դարձան: Եվ մութն էր. ձյունի սպիտակությունն էր միայն, որ ցույց էր տալիս ոտքերի երկար հետքը:

Պետոն տեսել էր այդ և հետևում էր: Հրացանը ուսին՝ ոչ հետ էր նայում, ոչ կողքին: Գնում էր և երազում: Երազում էր Նազիկի հրճվանքը իրեն տեսնելիս... Արդյոք ո՞վքեր էին խմբի մյուս անդամները. ողջ կլինե՞ր Նազիկի պառավ խիստ մայրը. էլի չէր թողնի՞լ, որ Նազիկին մոտենա, նրա հետ երկար խոսի, այդտեղ էլ...

Եվ վազում էր, կտրում տարածությունը: Մտել էր մի պուրակի մեջ, որ ծածկում էր Քեռսե-դաղի այդ կուրծքը:

Անցե՞լ էր արդյոք կես-գիշերը: Հանկարծ կանգ առավ Պետոն և ինքն իրեն այդ հարցը տվավ: Երկինքը միապաղաղ սև, ոչ մի աստղի նշույլ չկար: Եվ եթե նա պարզ տեսնել էր սկսում նույնիսկ ժայռերն ու գագաթները՝ այդ իր աչքերի մթության վարժվելուցն էր:

Շրջանը վերջանալու վրա էր և, բարձրացած մի բլրակի վրա, դեպի ցած էր ուզում իջնել, երբ հանկարծ ձախ կողմից մի կրակ կանգնեցրեց նրան:

Ներքև, առապարի մացառուտների մեջ վառվում էր մի խարույկ. նրա լույսը լուսավորում էր բավական մեծ շրջան, իսկ շրջանի մեջ երբեմն երևում էին մարդկային ստվերներ:

Նոքա՞ էին արդյոք, թե նորից քուրդեր:

Պետոյի սիրտը տրոփել սկսեց. մի՞թե այդպես շուտ հասել էր, պիտի տեսներ Նազիկին:

Ուրախությունը երկար չտևեց սակայն. մի անհասկանալի տխրություն համակեց նրան:

Ինչու էին կանգ առել ուրեմն։ Դժբախտությո՞ւն էր պատահել, մեկը մեռե՞լ էր, ցա՞ծ էր ընկել, կանանցի՞ց էր, Նազիկը չէ՞ր։

Քարացել էր, ինքն էլ չգիտեր ինչու. ոտներն այլևս դժվարանում էին շարժվելու. նոր միայն սկսեց զգալ աննկարագրելի հոգնածություն...

Բայց ճիգ գործեց և քայլեց՝ միշտ աչքը խարույկին։ Նախ դանդաղությամբ էր քայլերը փոխում, բայց մեկեն երկու ոստյուն գործելով՝ անցավ մի մացառի վրայից և սկսեց վազել... Ի՞նչ, Նազիկը գուցե տառապում էր այնտեղ, գուցե մեռնո՞ւմ էր, վերջին շունչը տալիս ձյունի մեջ ընկած, իսկ ինքը հոգնում է, վիատում է, ուշանում։

3

Արտուճի թփերով պատած մի շրջանի մեջտեղում, արմատախիլ փշերի դեզով կազմել էին մի մեծ խարույկ և նրա շուրջը թափվել, ընկել էին գաղթականները։

Մոտ երեսուն հոգի էին. կին, աղջիկ և մանուկներ։ Բոլորը խղճալի, պատառոտուն հագուստով, գրեթե ոտաբոբիկ և գլխաբաց։ Տղամարդկանց վրա բաճկոնները կտրտված, բացված ամեն կողմից, ցեխոտ ու կարմիր։

Կանանց հագուստն էր՝ միակ երկար պարեզոտի, որ իր ծակոտիկներով ցնցոտի էր եղել և ցրտի առջևն էր պարզում մերկ անդամներ։ Էլ ձեռք չէր մնացել առանց կապտելու, ուռելու, կարկամելու։ Փչում էին նրանք իրենց ձեռքերի մեջ, ոտները վեր ու վար անում ձյունի մեջ կանգնած, շփում ականջները... քթերից ծորում էր, աչքերից հոսում...

Հավաքվել, ընկել էին խարույկի շուրջը։ Ոմանք փռվել՝ մեջքը կրակին էին տվել։ Քունը ընկճել էր կանանց և մանուկներին։ Որդիք իրենց ծնողների գրկի մեջ կուչ եկել և այդպես կույտ-կույտ, միմյանց գալարված՝ պարզվել էին ցեխի և ջրի մեջ, որ գոյացել էր կրակից հալվող ձյունից։

Լսվում էին երբեմն խուլ, խոր հառաչներ ու գանգատներ։

— Օ, ի՜նչ ցուրտ է, ի՜նչ ցուրտ։

— Քաղցա՜ծ եմ, մայրիկ...

— Յամա՜ն աստված,— գոչում էր մի կին,— հոգիս առ պրծիր...— Որդին էր, որ տանջում էր նրան, կրկնապատում նրա վիշտը. այդ փոքրիկ արարածի ձայնը կտրվել էր, բայց նա բերանը մոր ուսին կպցրած՝ կոկորդից խուլ, խռպոտ աղաղակներ էր արձակում, որ, ով գիտե, գուցե նրա վերջին շունչն էր...

— Տե՛ր աստված,— մռմռում էր մի տղամարդ.— մեր մեղքն ի՞նչ էր, որ այս օրին էլ հասցրիր մեզ ...

Կրակի շուրջը նստոտած հինգվեց տղամարդիկ չէին քնել, կուչ էին եկել և պպզել. առվակներ էին վազում նրանց տակից, ցուրտը սառեցնում էր նրանց մեջքը։

Չէին քնել, աշխատում էին արթուն մնալ։ Նրանցից մեկը, մի ծերունի, ցուպը գոգին և գլուխը ծնկներին կռթնեցրած՝ խոսում էր հոգնած ձայնով։ Լսում էին, և ուժ տալով խոսում էր ծերունին, բայց որքան ակամա, որքան ուժասպառ։

Պատմող ծերունին հիսնամյա, կորաքամակ և կարճահասակ անձ էր. կյանքը զգալի կերպով քայքայվում էր նրա մեջ. վշտեր, միայն վշտեր էին, որ արտահայտում էր նրա հայացքը, դեմքը. այդ ճանապարհորդությունը ուժ չէր թողել այլևս նրա մեջ:

Բայց նա պատմիչ էր և պատմում էր որպեսզի չթողնի քնելու իր հայրենակիցներին, խմբի պահապաններին: Պատմել էր նա իր կյանքի ամբողջ ընթացքում, զբաղեցրել եղբայրներին, մոռացնել տվել շատ վշտեր... Այժմ էլ նույնն էր անում: Փակվում էին նրա աչքերը, բայց նա խոսում էր. լեզուն ուզում էր դադարել, սառում էր նրա մեջ ամեն ինչ, բայց նա դարձյալ պատմում էր...

«... Թագավորը ողորմեց նրան, ասաց... Գնա, աչքիցս հեռացիր... ճակատիս այսպես էր գրված, որ մի որդի պիտի ունենայի և այդ որդին՝ իր ազատողի ձեռքով էլ պիտի սպանվեր...»:

Եվ խարույկը ճարճատում էր, կայծեր արձակում ու իր արյունոտ բոցով լուսավորում այդ տեսարանը: Մթությունը մի քանի քայլ հեռվից ծածկում էր իր մեջ ամեն բան. երբեմն միայն, երբ բոցն էր բարձրանում, ֆոնի վրա գծվում էին ժայռերի մութ ստվերները:

Պետոն կանգ էր առել մի քանի քայլ հեռու և դիտում էր այդ տեսարանը: Այդքան ողորմելի բան չէր տեսել երբեք. իր եղբայրներն ու քույրերը, գուցե և իր Նազիկը նրանց մեջ, այդպես բնավեր, թշվառ, այդպես կիսամեռ դրության մեջ, անծանոթ հողի վրա և թափված ձյունի, ցեխի ու ջրի մեջ, կուչ եկած, կիսամերկ...

Արյունը գլխին խփեց: Մի կատաղի զայրույթ խեղդում էր նրան. բռնահարեց դաշույնի կոթը, բայց մտաբերեց իսկույն, որ վաղուց է թշնամուն ետ թողել և եկել էր զոհը տեսնելու. այժմ նա կանգնած է շիջող կյանքի, ոչնչացող հասարակության առջև և ականատես է նրա օրհասին, ականատես նրա վերջին տանջանքներին...

Ի՞նչ էին վայելել դրանք՝ այդ թշվառները, որ այժմ այդպես մեռնում էին հեռու՝ իրենց երկրից, տնից ու հողից: Ծնվել էին գերության շղթայի մեջ, սնվել թշվառությունով և այժմ, շներից ավելի վատ դրության մեջ՝ մեռնում են, ոչնչանում, այն էլ օտար հողի վրա, անոթությունից, ցրտից...

Եվ այդպես քանի՛ քանիսները, հարյուրներ, հազարներ...

Կամաց քայլելով առաջ գնաց: Լսվել էր նրա մոտենալը. մի քանիսները շարժվեցին, ոտքի ելան. պատմող ծերունին դադարեց. իսկ մեկը, որ ըստ երևույթին խմբապետն էր, առանց շարժվելու տեղից՝ նայեց եկողին և ասաց տխրությամբ.

— Քուրդ է... էհ, թողեք, տղերք, չէ որ ոչինչ չունինք:

Հետո Պետոյին դարձավ և ասաց քրդերեն.

— Ոչինչ չմնաց... ձերոնք վաղուց առին եղածները:

Երիտասարդը մի քանի քայլ էլ առաջացավ, դրեց գետնին հրացանի կոթը և ասաց մեղմ ձայնով.

— Մի վախենաք, ես հայ եմ, ճանապարհորդ... Դուք ո՞ր կողմերից եք...

— Մշո երկրից, Ցրոնից...

— Ցրոնի՞ց... Գոմերից չկա՞ն ձեր մեջ:

— Գոմե՞ր...— մռմռաց խմբապետը,— նրանք մեր մեջ չկան:

Պետոն խոնարհեցրեց գլուխը. ծնկները կթոտեցին և նա համարյա ընկավ. հրացանը շառաչյունով գետին իջավ:

— Ախ,— ասաց նա խորին տխրության շեշտով,— օրերով քայլիր, հույսով հասիր այստեղ և... չկա։ Ու գլուխը ձեռքերի մեջն առավ:

Բոլորը հուզվեցին։ Կանայք, որոնք զարթնել էին, մոտ եկան. նրանցից մեկը ետ քաշվեց և մեղմ ու հուզված ձայնով ասաց.

— Խե՜ղճ... նշանածին է փնտրում:

Պետոն ցնցվեց և բարձրացրեց գլուխը:

— Ո՞վ է նշանած ասողը,— հարցրեց նա,— դո՞ւ էիր, մայրիկ... Այո՛, նշանածիս եմ փնտրում... գնա՜ց ցրտի մեջ, հալածված, կիսամերկ. ապրո՞ւմ է արդյոք... Այո, նրան եմ փնտրում... ո՞ւր է, տեսե՞լ ես նրան:

— Ո՛չ,— պատասխանեց տխրությամբ կինը,— ես որտեղի՞ց եմ տեսել նրան, խեղճ տղա:

— Ինձ ասացին, որ ձեր մեջ մի քանի հատ աղջիկներ կան.— մրմնջաց Պետոն,— ես կարծեցի թե իմ Նազիկը նրանց մեջն է... ո՞ւր է այժմ արդյոք:

Ոչ ոք չէր խոսում. երիտասարդի խոր տխրությունը, այդ սաստիկ վիշտը պահ մի մոռացնել տվեց բոլորին՝ իրենց տանջանքը. թշվառները թշվառի տխրությունով համակվեցին. մի քանիսի աչքերում արտասուքի կաթիլներ երևացին:

— Լսի՛ր, երիտասարդ,— խոսեց վերջապես խմբապետը, — ես գիտեմ, որ Խնուսից շատ շատերը, Մուշից էլ բավական գաղթողներ եղան. անշուշտ գոմերցիք էլ եղել են. ականջիս մեջ դիպավ, որ անցել են։ Գուցե նրանք այժմ մեզնից ավելի երջանիկ են, ռուսաց հողի վրա, հայերի տաք գոմերի մեջ... Երանի նրանց, ազատվել են ցրտից, անոթությունից։ Նայիր մեկ մեր վիճակը... մեզնից կեսը, որ հասնի այն կողմ, փառք կլինի։ Գնանք մեզ հետ, երիտասարդ, գնանք Կարս, գուցե այնտեղ գտնես նշանածդ. այնտեղ են բոլոր թշվառները:

Պետոն չպատասխանեց:

— Մի հուսահատվիր, որդիս,— մեջ մտավ պատմիչ ծերունին խուլ ձայնով,— գնանք մեզ հետ, կգտնես նշանածդ, եթե չէ մեռել... Ախ, մեռածներն են միայն, որ չեն վերադառնում... հայր ունի՞ս, զավակ:

— Այո, հայրիկ, հայր ունիմ, երկիր մնաց։ — Ախ, զավակս, ետ դարձիր շուտ, գնա հորդ մոտ... դու չգիտես, թե որքան թանկ արժե մի հոր համար իր որդու ներկայությունը, նրա կյանքը. ամեն, ամեն բան արժե... Դարձի՛ր ետ...

Ասաց ծերունին և լաց եղավ, արտասուք չուներ. դեմքի գծերը այլանդակվեցին:

— Հերիք է, աստվածդ սիրես, Մկո.— հանդիմանեց նրան խմբապետը — ի՞նչու ես սպանում մեզ էլ...

Ծերունին զսպեց իրեն. տրորեց աչքերը:

— Լավ, ահա, էլ չե՛մ լալիս, ոչ... իմ կորցրածը ի՞նչ արժե այս բոլոր կորուստի մոտ. ոչինչ, մի խիլ, մի կտոր հող...

Եվ նորից տիրեց լռություն։ Սկսել էր մի մեղմ, սառը քամի, որ օրորում էր խարույկի բոցը. կանայք ու մանուկները, ինչպես և քիչ–քիչ տղամարդիկ ևս, գնացին, փաթաթվեցին միմյանց և ընկան քնելու, էլի սկսեց լսվել սառած փոքրիկների վնգոցներ, սիրտ պատառող աղաղակներ:

Պետոն մոռացավ իր ցավը և սկսեց մոտից զննել թշվառներին։ Կտրտվում էր սիրտը։ Պոկոտեց մի քանի մացառներ էլ. կրակն արծարծեց, մի մերկանդամ մանուկի տվեց իր այծե մորթի բաճկոնը և փաթաթեց նրա մեջ:

— Շատ կա՞ մինչև սահմանագլուխը.— հարցրեց նա խմբապետին դառնալով:

— Մեզ ասել են, որ այստեղից քիչ է մնացել,— պատասխանեց նա,— տեսնենք կարո՞ղ ենք առանց տեսնվելու անցնել:

— Ուրեմն գնանք, էլ ինչու ենք նստել,— մեջ մտավ մեկը,— չէ որ մեզ գիշերով անցնել է պետք. աղոթարանը շուտով կբացվի:

Ամենքը նայեցին դեպի արևելք:

Աղոթարանը բացվում էր։ Ցուրտը սաստկանում էր, իսկ քամին ավելանում։ Խարույկի լույսը իջնում էր:

Պետոն կռթնած հրացանի վրա, դիտում էր խոնավ, թաց գետնի վրա կանանց ու մանուկներին:

Ուրեմն իր Նազիկն էլ այդպես, գուցե ավելի վատ դրության մեջ է. ո՞վ գիտե, դեռ ապրո՞ւմ է. կարողացե՞լ է հասնել, կարողացե՞լ է դիմանալ։ Որքա՜ն կուզենար նորից ճանապարհ ընկնել, վազել։ Զգում էր, որ եթե քիչ էլ չշարժվի, կթուլանա այլևս. ոտները սառել էին, պետք էր թշվառների մասին էլ մտածել. պետք է շտապել՝ կտրել լեռները և ընկնել մի գյուղ. մի-մի կտոր հաց, մի-մի տաք անկյուն ճարել նրանց համար:

Դարձավ և գետին փռվածներին նայեց։ Եթե չզարթնեին դրանք, եթե մի քանիսները մեռած լինեին կամ սառած, ինչ պետք էր անել. թաղել։ Ոչ, ժամանակ կորցնել չէր կարելի. պետք է քայլել:

Որքա՜ն անգութ բաներ էր մտածում։ Քունը և հոգնածությունը շշմեցրել էին նրան:

— Քայլե՛նք,— գոչեց նա բարձր ձայնով,— ժամանա՜կ է...

Շատերը վեր թռան։ Խմբապետը, որ գլուխը կախած՝ քնից հաղթվել էր, ընդոստ ելավ և գոռաց.

— Այո՛, դե՛հ, վե՛ր կացեք. ժամանակ է, գուցե հաջողվի մեզ սահմանից անցնել քանի լույս չէ:

— Քայլե՛նք. . . — ասաց Պետոն. — աստված ողորմած է։ Ոտքի ելան քնաթաթախ. ցրտից սրթսրթում էին, ատամները կափկափում, կուչ գալիս։ Վերցրին ինչ որ ունեին։ Շատերը չէին կարողանում շարժել իրենց անդամները. թացությունը կյանք չէր թողել նրանց մեջ. մի քանիսը աղաչում էին, որ իրենց թողնեն տեղնուտեղ մեռնելու. . . Սկսվեց երեխայոց սոսկալի լացը. . .

Մի քանի երիտասարդներ առաջ ընկան. կանայք և աղջիկներ մեջտեղ մտան ու ծանր, հուղարկավորության պես, խումբը սկսեց ցած իջնել։ Քարշ էին գալիս. հազիվ ոտի վրա կանգնած՝ երերում էին. հորանջում, գանգատվում մեջքի և ազդրերի ցավից. կոթնում էին ընկերներին. իսկ կանանց մեջքի վրա կպած մանուկները, կարծես ձգված մի խոր փոսի մեջ՝ խուլ, քստմնեցուցիչ կերպով վնգում էին։ Նրանցից մի քանիսները լռել էին. քնած էին թե սառած, ով գիտեր. ոչ ոք սիրտ չէր անում ստուգելու։

Իջնում էին ցած։ Պետոն խմբապետի հետ առաջնորդում էր խմբին. իսկ մի երիտասարդ, որ հսկողն էր, անդադար առաջ ու ետ էր գնում և խրախուսում թուլացողներին, ետ մնացողներին։

Մի քանիսը կքվեցան, փորձեցին նստել, ետ մնալ. բայց հսկողը ցնցում էր և գոչում.

— Քալե՛...

Ու քայլում էին. ետևից եկողները, որոնց մեջ կային մի քանի ծերունիներ, լուռումունջ, իրենց սպիտակ գլուխը գրեթե երկար ցուպերի գլխին կոթնեցրած՝ փոխում էին միօրինակ քայլեր, անդադար, առանց կանգ առնելու։

— Քալեցե՛ք,— կրկնում էր միշտ հսկողը,— քա՛ջ եղեք. ս. Կարապետ մեզի քոմագ... Հա՛, քիչ մնաց, մի քնեք, դե՛, Մկո աղա, սկսի հեքիաթդ, աղեկ բան մը պատմե։

— Հոգնած եմ,— մրմնջաց ծերունին, որ հազիվ շարժվում էր և այն էլ ուրիշի կոթնած,— չեմ կարող...

— Դեհ, վնաս չանի, զոռ արա՛,— խրախուսեց երիտասարդը,— որ պատմես՝ ինքդ էլ կմոռանաս ցավդ։ Մի լավ բան պատմիր, որ տղերքը չքնեն։

— Հա՛, պատմիր, Մկո,— ասացին,— մի լավ բան պատմիր, որ մեր քունը փախչի։

Ծերունի պատմիչը չէր պատասխանում. այնքա՛ն հոգնել էր, որ պնդելու իսկ սիրտ չկար. մնում էր զիջանել։ Երկու քայլ փոխեց, երկու ծանր քայլեր և ասաց.

— Հոգնած եմ, բայց կպատմեմ։

— Մկոն հեքիաթ է պատմում, լսեցե՛ք,— զոռաց հսկողը առաջ գնացողներին։

Քայլերը մեղմացան. հետո, առաջ գնացողները ետ մնացին. մի շրջան կազմվեց պատմիչի շուրջը։ Շրջանից դուրս մնացին միայն կանայք, իսկ առջևից՝ Պետոն և խմբապետը։

— Լսեցե՛ք...— սկսեց ծերունին մի մեծ ճիգ գործելով,— ծերունի Մկոյի, Մշո դաշտի պատմիչի վերջին պատմությունը լսեցեք... Զգում եմ, շատ չի անցնիլ, էլ Մկոն չի պատմիլ, էլ նրա պատմությունը ձեզ չի զվարճացնիլ... կլռի Մկոն... Լսեցեք նրա վերջին պատմածը։

... Կլինի չի լինիլ մի մարդ, մի խեղճ մարդ, որ ոչ որբին էր զրկել, ոչ մանուկի լացացրել և ոչ էլ ընկերին օգնություն մերժել։ «Լավ մարդ էր թե չէ, այդ աստված գիտե. բայց աղքատը նրա դռնից դատարկ ձեռքով ետ չէր դարձել, այրին նրան չէր մեղադրել, թշվառներին նա չէր զրկել և ոչ էլ տոկոսով մարդ խեղդել . . . Ապրում էր նա ոչ վատ. մեռել էր կինը, մեռել էր աղջիկը. բոլորից միայն մի հատ որդի էր մնացել։ Վեցն էր թաղել, թաղելով ծերացել։ Կյանքի մի փոքրիկ կաթիլ ուներ, նա էլ իր միակ որդու համար էր պահել... Ուներ չուներ, այդ մի հատիկ որդին ուներ։

Որդին՝ քսան տարեկան մի ջիվան, կտրիճ, սիրուն ու թոսուն, բոյով ու թուխթուխ։ Սար ու ձոր դողում էր նրա առջև... իսկ հայրը ուներ չուներ այդ ուներ։ Նրա կյանքի պայմանն էր այդ։ Ամեն զրկանք, ամեն նեղության նա արհամարհում էր, ամեն բան կրում . իր Առաքելին ուտեցնում, նրան հագցնում, նրա համար մտածում, նրան էր երազում...»։

Դողում էր պատմիչի ձայնը . քայլում էր նա. իսկ ակնարկը հեռուն, մթության մեջ, կարծես որոնում էր մի ինչ-որ սիրելի բան, ժպտում էր սիրալիր կերպով...

«... Այդպես երջանիկ,— շարունակեց ծերունին,— էլ դարդ կամ ցավ նրա համար չէր։ Մեծանում էր որդին . կտրիճ էր դառնում . իսկ հայրը ծերանում, ուժերը սպառվում։ Բայց ինչ հոգ, որդի ուներ, որի կյանքի աշխուժով ապրում էր ինքն էլ։

Անցան տարիներ, երջանիկ տարիներ . եկավ և ձմեռ . էկավ գարուն էլ, ամառը հասավ։ Կտրիճ երիտասարդը կյանք էր ստանում, օրեցօր աճում և ծերունուն երջանիկ դարձնում։ Նրա մի ոստումը, նրա մի ժպիտը թշվառ ծերունուն արև էր տալիս... Բայց...»։

Պատմիչը այստեղ կանգ առավ . ցուպը գետնին կռթնեցրեց և ասաց շատ թույլ ձայնով.

— Թողեք շունչ առնեմ...

Կանգ առին բոլորը ու լուռ էին։ Ծերունին խոնարհեցրեց գլուխը մի վայրկյան, հետո դանդաղությամբ բարձրացրեց, տխուր, խամրող աչքերով լսողներին նայեց և շարունակեց։

«Մեկ օր, մի սև օր . . . երբ հայրը իր տան առջև նստած, որդու մասին էր մտածում, երբ երկինքը պայծառ բացված, արևն էր փայլում, երբ ծաղիկները միացած, օդը հոտով էին լցնում և երբ ծիծառներն ու սոխակները երգեր դայլայլում... Հավարն ընկավ գյուղը։ Քուրդերը դաշտում վրա էին տվել, տավարը փախցրել ու մարդ սպանել... Սպանվածին էին բերում։

Իսկ հայրը նստել իր դռան առաջ՝ երազում էր։ Հավարը նրան երազից չէր կորզել։ Երազում էր իր որդու վրա։ Ահա ամուսնացնում է նրան . ունի թոռներ . հարսը իրեն խնամում է, և թոռները՝ գալիս մագլցում են նրա ծնկների վրա, խաղում նրա մազերի հետ, և ինքը օրորում է փոքրիկին ու իր գիտցած հին լելեներից մեկը երգում է նրան քնեցնելու համար . . .

«Լե՛, լե՛, բալաս, լե, լե, ձագուկս, լե՛, լե՛,

Թռչունը կե՛րգե։ Հովն ալ անուշ կբուրե.

Լե, լե, բալա՛ս . . .

Բայց այն ի՞նչ է. այդ ի՞նչ բազմություն է, որ գալիս է դեպի իրեն փողոցը։ Խոսում են, գոռգոռում, մի բան են բերում հետները. արդյոք իր դրացիների՞ց է զարնվածը...

Գալիս են դեպի նրա կողմը... մոտենում են։ Ոչինչ չէ հասկանում... հիմա՛ր են, ինչ են այդ գյուղացիները. գժվել են։ Ի՞նչ գործ ունեն իր հետ... Հեռու, հեռու գնացեք, սպանվածի հետ գործ չունիմ ես, ոչ...

Մոտենում են... Հանկարծ նա վեր է ցատկում, ձգում է ձեռքի ցուպը... մի վայրենի, սոսկալի աղաղակ է դուրս թռչում նրա կոկորդից... հարձակվում է դեպի եկողները... իր որդին էր այդ. սպանված, դաշունահար... Շարժում է, սարսափելի ձայնով մահ է նա կանչում...»:

Ամենքը կանգ էին առել. պատմիչի ձայնը լցվում էր մի խռպոտ հուզմունքով։ Լալիս էին:

Կանգնել էր պատմիչը ձյուների մեջ, ձեռքերը առաջ պարզել, սոսկալի վշտով ակոսված ու գունատ դեմքը կիսալուսին տվել, աչքերը վեր, մազերը փչող քամուն...

Ասաց, մի բոպե լռեց, հետո տեղնուտեղ իջավ, որպես իջնում է մարող մի խարույկ, ցուպը կողքին ընկավ։ Եվ ոչ ոք շարժվեց իր տեղից։ «... Մեռել էր,— շարունակեց ծերունին խիստ մեղմ, գրեթե հազիվ լսվող ձայնով,— իր որդին էր. սպանել էին... էլ ինչո՞ւ ուրեմն ապրել, ինչո՞ւ ... Ու մտավ ծերունին իր խրճիթը և գլուխը դրեց հանգած օջախի վրա ու այսպես...»:

Ծերուկի ձայնը կտրվել էր. բոլորը կռացան դեպի նա։ Շրթունքները դեռ շարժվում էին և մի աղիողորմ շշուկ էր միայն, որ լսվում էր.

«Լե՛, լե՛, բալաս, լե, լե, ձագուկս, լե՛, լե՛...»:

Հետո մի ցնցում... և ամեն ինչ վերջացել էր:

Ընկավ կողքի վրա, գլուխը թևի մեջ առավ և շունչը փչեց:

Տիրեց մի խոր, անշշուկ և ճնշող լռություն։ Աղոթարանի լույսը մեռելային լույսով լուսավորում էր տեսարանը. քամին սաստկացել էր:

Հենց այդ միջոցին էր, որ մայրերից մեկը, զգալով մեջքի վրա մի սառնություն, դարձավ ու շոշափեց կապած մանուկին:

— Աղջի,— հրեց նա կողքի կնոջ և շշնջաց.— Սերգոն էլ չէ շարժվում:

Մյուս կինը մոտ գնաց, շոշափեց մանուկին, բարձրացրեց նրա գլուխը, հետո սոսկումով բաց թողեց և մռմռաց.

— Քնել է...

Մանուկը սառել էր։ Մեռած էր:

Իսկ քամին անդադար փչում էր. լսվում էին հեռավոր բուերի ողբագին ձայներ։ Աղոթարանի ձայնը մեծանում էր:

Կարսի ձրի ճաշարանի դռան և լուսամուտի առաջ խռնվել էր մի մեծ բազմություն, որ գրավել էր նեղ բակի քարակույտերը, փտած գերաններն ու տանիքները և ցիրուցան թափվել-նստոտել նրանց վրա։ Ամեն ոք սպասում էր ճաշը բաժանելուն։

Թուրքահայ գաղթականներ էին դրանք՝ խառն տեղացի աղքատների հետ։ Բարեգործությունը սկսել էր կերակրել նրանց։ Ազատվել էին ցրտից, քուրդից, թուրք զինվորից և պաշտոնյայից... այժմ նրանց միմի անկյուն էին հատկացրել քաղաքում։ Ոմանց՝ հին, անբնակ կիսավեր տների մեջ պատսպարել, ուրիշներին այս, այն խարխուլ խրճիթը տվել, շատերին գյուղերն էին ցրել, իսկ ուտելու համար ոչ միայն ալյուր էին բաժանում, այլ ամեն օր մսով կերակուր տալիս։

Հալածվածներն այդպիսով փրկվել էին։ Մանավանդ, որ էլ վախ չունեին իրենց աղջիկների առևանգվելուց կամ կանանց անպատվության ականատես լինելուց։

Խոսում էին այժմ նրանք, ծիծաղում, կատակներ անում։ Մի կողմում, քարակույտի վրա, մի նոր գաղթած կին հներին պատմում էր իրենց ճանապարհորդությունը, թվում ճանապարհին ցրտից ու քրդերից սպանվածներին... գերանների վրա բազմած երիտասարդներից մեկն էլ պատմում էր Համիդեի զորքի գործերը։

Կտուրի վրա նստած կային ծծկեր մանուկ ունեցող կանայք և ջահել աղջիկներ. սև էին և ցնցոտիներով պատած, բայց սիրուն էին և կարսեցի շատ ջահելներ իրենց հայացքը հաճախ ուղղում էին դեպի այդ դեմքերը։

Ցածում, լուսամուտի առաջ, միմյանց էին հրում և աշխատում էին միմյանց առաջ կանգնել ու լուսամուտին մոտ լինել, ամենից առաջ կերակուր ստանալ։ Մեծ մասը մանուկներ ու պատանիներ էին։

Ներսում խոհարարը երկար շերեփով մեծ կաթսաների կերակուրն էր խառնում. նրա օգնականը փայտ էր ձգում հնոցի մեջ, իսկ հերթապահ ակնոցավոր երիտասարդը՝ բաժին ստացողների ցուցակը զննում։

Եղանակն այդ օր քիչ տաք էր, արևը թեև պայծառ փայլում էր, բայց քամի կար և բավական խիստ քամի։

Ճաշարանը գրեթե բազարի մեջ էր, գլխավոր ճանապարհի կողքին. դրա համար էլ կառքերի և բազմության ձայները բակի լայն դռնից ազատությամբ ներս էր լցվում։

— Ասում են, որ ճաշարանը շուտով փակվելու է,— խոսում էր մի ալաշկերտցի պառավ,— դո՞ւք էլ լսել եք։

— Չէ, չե՛նք լսել,— պատասխանեցին շատերը։

— Ի՞նչ պիտի լինի մեր դրությունը,— գիտել տվեց մի ուրիշ կին,— որդիներս կկոտորվեն քաղցածությունից. մարդս մեռել է. պստիկներից մեկն էլ հիվանդ է. չգիտեմ ի՞նչ անել։

— Ապա ե՞ս,— ձայնեց մի քիչ հեռու մի երրորդը,— երեք որդի ունեմ, երեքն էլ տկար, թույլ, փոքր...

— Ասե՛ք, ասե՛ք,— ճչաց մի տեղացի աղքատ կին,— բոլորդ էլ սուտ եք ասում, մեկը երկու եք շինում և եկել եք մեր հացը կտրում...

— Ծո, քեզի՞ ինչ,— պատասխանեց նրան ալաշկերտցի պառավը,— քո հացը ո՞վ է կտրում, ազգը սաղ կենա:

— Այ ազգը խռով կենա գլխիդ, անատամ պառավ,— գոչեց մի ուրիշ տեղացի,— վեր եք կացել ձեր երկրից եկել ու ազգի ձրի հացը ուտում եք. ծույլ, ստախոս հարամներ, ոչ ուզում եք գործ անել, ոչ էլ մի տեղ նստել...

Ալաշկերտցի պառավը զայրացած շարժվեց, մյուս կանայք սպառնական դիրք բռնեցին և անշուշտ սկսվելու էր մի թունդ կռիվ տեղացի և գաղթական կանանց մեջ, երբ մի կառք դղրդյունով ներս մտավ բակը, կանգնեց մեծ աղտոտ առվակի մոտ: Կառքից ցած իջավ պաշտոնական հագուստով հասակավոր մի անձ, արագ քայլերով անցավ առվակը և ներս մտավ:

Ամենքը լռեցին, բոլորը, նույնիսկ կանայք ոտքի ելան:

Պաշտոնական անձը, որ զինվորական բժիշկ էր երևում, թեթև կերպով բարևեց բոլորին և ճաշարանի սենյակը անցավ. բայց մտնելուց առաջ, դռան մոտ քիչ կանգ առավ և ասաց.

— Հա՛, հը՛մ, արդեն այդքա՛ն հավաքվել են. ինչքա՛ն շատ են այսօր... Հաց պետք է, որ դիմանա:

Այդ ասելուց հետո բժիշկը խոհարարին դարձավ.

— Մի՞թե պատրաստ չէ կերակուրը,— հարցրեց շտապով:

— Պատրաստ է,— ասաց հերթապահը,— սկսենք:

— Դե՛հ,— խոսեց բժիշկը դրսի ամբոխին,— քիչ ետ քաշվեք. տետրակներդ էլ պատրաստ պահեք. կերակուրը բաժանվելու է: Հանդարտ կացեք, իրարու չհրեք:

Սկսեցին իրարու հրել, ճզմել, ամաններն ու տետրակները միմյանց ետևից պարզվեցին դեպի լուսամուտը, լսվեց հայհոյանք, հառաչ, ճիչ, անեծք: — Չէէ՛, այդ չեղավ,— բացականչեց բժիշկը:— Մի հրեք իրարու: Ով տոմսակ ունի, թող նա առաջ գա. տոմսակ չունեցողները՝ ետ... Դու չունես, ինչո՞ւ ես հրում, ետ գնա... իսկ դո՞ւ, այ աղջիկ, ո՞ւր է տոմսակդ:

Մշեցի մի աղջիկ էր, որ լռությամբ կանգնել էր և կապտագույն հրաշալի աչքերը բժշկի վրա սևեռել:

Լսելով, որ խոսքն իրեն են ասում. ցնցվեց, երազում էր:

Շիկահեր էր, վայելուչ հասակով և քնքուշ գծագրությամբ, դեմքը ցրտից ու նեղություններից սևացել, այրվել էր:

— Ունիմ,— թոթովեց նա ձեռքի տետրակը ցույց տալով:

— Լա՛վ, սպասիր հերթիդ,— ասաց բժիշկը,— Մշեցի՞ ես դու:

— Հրամանք ես:

Եվ կարմրելով բժշկի հայացքից, դեմքը խոնարհեցրեց:

— Ի՜նչ գեղեցիկ է,— ասաց հերթապահը, որ բժշկի ետևից նայում էր,— ուրիշ գեղեցիկներ կան այնտեղ, կտուրի վրա, նայեցեք բժիշկ:

— Այո,— ասաց բժիշկը,— ոչ մեկը սրա նման չէ:

Այդ միջոցին խոհարարը մոտեցել էր ամանները առնելու, որպեսզի կերակուր լցնի: Ամանների մի բազմություն պարզվեց դեպի նա:

— Քի՛չ հեռու, քի՛չ հեռու,— ձայնեց խոհարարը,— մի վախենաք, ամենքիդ կհասնի:

Մի քանիսներից հետո հերթը մշեցի գեղեցիկ աղջկանն էր:

— Քանի՞ բաժին,— հարցրեց օգնականը:

— Երեք,— պատասխանեց աղջիկը կաս-կարմիր կտրած:

Տետրակը անցավ օգնականի ձեռքը: Նա բաց արավ և կարդաց:

— Գոմերցի Վրթնոյի այրին. . . երեք բաժին. ճիշտ է, լցրեք:

Ամանը լցվեց: Նազիկն էր այդ աղջիկը: Առավ նա կերակուրով լի պտուկը, ուժ տվեց, ճղեց ամբոխը: Մի քանի անգամ քիչ մնաց ամանը սահեր ձեռքից. բայց նա երկար պարեգոտի քղանցքը բարձրացրեց և նրանով բռնելով տաք ամանը, հաջողեց հասցնել մինչև բակի դուռը: Այնտեղ նա երկար առվակի մոտ կանգ առավ, կռացավ, սրբեց պտուկի կոթերին կապված չվանը: Հետո էլի երկար պարեգոտի քղանցքը ձեռքի մեջ առավ և նրանով ուզեց բռնել չվանը, երբ մի ձեռք դիպավ ամանին, հետո մի ձայն լսվեց կողքից, որ ասում էր.

— Ինձ թող ամանը:

Ցնցվեց ու վեր նայեց:

— Ես եմ, Նազիկ,— ասաց խոսողը,— մի վախենալ... իսկ այժմ թող տուր, որ ես վերցնեմ ամանը և քայլենք. . . Ուրեմն ահա, թե որտեղից էիր ամեն օր կերակուր վերցնելու գալիս և ինձ խաբում էիր, թե ձեր կերակուրը մի տեղացու խոհանոցում եք եփում և դու գնում էիր բերելու:

— Պետրո՛ս,— կմկմաց աղջիկը աղաչավոր,— մի նեղանալ, Պետրոս ջան. . . չուզեցի հայտնել քեզ այս մեր ամոթը:

— Քայլե. . . ինչո՞ւ նեղանամ. առաջ ընկիր և գնանք:

Երկուսն էլ դուրս եկան բակից և ծռվեցին դեպի գետափը:

— Այդպես ուրեմն,— շարունակեց Պետոն գունատ ու դողդոջուն ձայնով,— մուրում եք, և ես այդ չգիտեի. . . Տեսա որտեղ և ինչպես էիր կանգնել մի ժամից ի վեր, այս մի կտոր կերակուրը ստանալու համար. . . Որքա՜ն ընկե՛լ ենք մենք, որքա՜ն. . . Հիշո՞ւմ ես, Նազիկ, թե ինչպես պտուկներով մաքուր և թարմ — ոչ այսպես անհամ — կերակուրներ էիր ցրվում մեր գյուղից անցնող աղքատներին. . . իսկ ա՞յժմ. . . Չէ, այս շատ դառն է. . . և դեռ ձեռքումս է այս ստորացնող ամանը:

Ասաց և բարկությամբ պտուկը շպրտեց մի խոր առվակի մեջ:

— Պետրո՛ս,— բացականչեց Նազիկը հուսահատ ձայնով,— մորս քաղցած թողիր...

Հետո լռեց և գլուխը կրծքին իջեցրեց:

— Քաղցա՛ծ,— ասաց Պետրոսը — էհ, ի՞նչ անենք, թող քաղցած մնա... ինչու ինձ խաբեցիք, կարծում էի, թե բան էիք ծախել երկրում և փող ունեիք հետներդ. թե չէ թևերիս մեջ ո՞ւժ չկա, չէ որ կարող էի աշխատել ու մի կտոր հաց ճարել ձեզ համար... գործի չէի ձեռնարկում, որովհետև ուզում էի, որ ետ դառնանք, ետ... մեր, մեր երկիրը գնանք...

Դուրս էին եկել բազարից էլ, այժմ քայլում էին հայոց նախկին և այժմ ռուսացրած եկեղեցու ստորոտից, գետափն ի վեր:

— Էհ, այո,— շարունակեց Պետրոսն երկար լռությունից հետո տխուր, կծու ձայնով,— ահա թե ինչու եկաք այստեղ և թողիք ձեր տունն ու տեղը... Գնալ, կանգնել այդ ողորմելի մարդկանց մեջ, մի ժամ սպասել, այդ սպասելու մեջն իսկ ամփոփված ստորությունը, նախատինքը տանել և այդ բոլորը մի ման կերակուրի համար...

Նազիկը չէր պատասխանում. կծկվել էր, ցեխի միջից քայլում էր, քիչ էր մնում լար:

— Լսում էիր, թե ի՞նչեր էին խոսում շուրջդ.— հարցրեց պահ մի լռությունից հետո երիտասարդը:

— Ո՛չ,— պատասխանեց աղջիկը,— ես քեզ ու մորս վրա էի մտածում:

— Իսկ ես լսում էի. լսում էի այնտեղացի կնոջ խոսքերը, ասում էր, որ մենք եկել ենք մեր երկրից և ազգի ձրի հացն ենք ուտում, որ մենք ծույլ ենք, խարդախ ենք...

Քայլում էին, աշխատելով չոր տեղեր կոխել: Քամին բաց էր անում Նազիկի պարեգոտը, ստիպված էր պարուրվել նրա մեջ, կծկվել, գլխի թաշկինակը ավելի ցած քաշելով՝ երեսը ծածկել:

— Կմրսես, շուտ-շուտ գնանք,— ասաց Պետրոսը և նորից շարունակեց:

— Չէ՛, պետք է ետ դառնալ,— ասաց հուզված ձայնով,— այստեղ քեզ նայում են իբր հափշտակողի վրա: Եվ իրավ, ինչ ենք մենք. այն, ինչ որ տեղացի աղքատների համար էր, մենք ենք գրավում. ի՞նչ իրավամբ: Երեկ մի դռան մոտից անցնում էի. լսեցի, թե ինչ խոսքեր էր ասում մի կարսեցի հաստ ու կարճլիկ կին մի բուլանխցի նիհար կնոջ, որ գրկել էր իր մերձիմահ մանուկին: Գիտես ի՞նչ էր ասում:

— Ես ի՞նչ գիտեմ,— մռմռաց Նազիկը,— ինձ այժմ տանջում է այն միտքը միայն, թե մայրս ի՞նչ պիտի ուտի. քաղցած է:

— Մենք այդ կտեսնենք,— պատասխանեց Պետոն խիստ ձայնով,— հերիք է, որքան մուրացինք ... ես էլ ձեզ հետ ուտում էի այդ մուրացած կերակուրը... Ոչ, այդ անկումը երբեք չեմ մոռանալու: Գոմերցի Պետոն ողորմություն առնի, ողորմությունով ապրի... Շա՛տ, շա՛տ ընկանք:

— Կարսեցիք բարի են, Պետրոս,— խոսեց Նազիկը,— տալիս են և չեն ստորացնում. մեզ միշտ օգնում են:

— Ես էլ գիտեմ, որ օգնում են, բայց այն բավական է, երբ քեզ նայում են որպես մուրացողի վրա. արհամարհանքով, ցավակցությամբ։ Մի՞թե դու քեզ վատ չես զգում, երբ ժամերով սպասում ես այդ լուսամուտի առաջ։

— Շատ վատս է գալիս.— ասաց Նազիկը,— ուզում եմ, որ գետինը պատռվի ես մեջը մտնեմ. մանավանդ առաջին օրերը... թաքնվում էի Եղսոյի ետևը, ամաչում էի, կարծում էի, թե ամենքն ինձ մատով են ցույց տալիս, կերակուրը չէր մտնում բողազը... Հիմա էլ չէ մտնում...

— Զգում էի, որ այդպես պիտի լիներ. մենք սովոր չենք մուրալու. մուրալուց ի՞նչ վատ բան կա ... Չէ, պիտի ետ դառնալ. հերիք է, ետ գնանք, սա ապրել չէ, սա մեռնելուց վատ է։

— Ես բան չեմ ասում,— խոսեց մեղմությամբ Նազիկը,— դու գիտես, որ ես կգամ քեզ հետ՝ ուր որ ուզես. իսկ մայրս... չէ, հիվանդ է, շատ հիվանդ. տեղիցը շարժվել չէ կարող, ծերացել է, գնալու նեղություններին դիմանալ չէ կարող։

— Կաշխատենք տանել,— պնդեց Պետոն,— այսպես ես չեմ դիմանա, չեմ կարող տանել, որ դու նորից գնաս և կանգնես այնտեղ, այն լուսամուտի առաջ... Ո՛չ...

— Ապա ի՞նչ անենք։ Մայրիկը չէ կարող. կմեռնի. հորս վրա շատ է մտածում. երեկ ասում էր թե, երանի հորս պես ճանապարհին, հայրենի հողի վրա մեռած մնար։ Դու կարծում ես նրա բողազից ցա՞ծ է գնում այդ կերակուրը։ Քանի-քանի անգամ ինձ ասել է. «Նազիկ, այս մուրացած կերակուրը ինձ սպանում է»։ Բայց եթե դառնանք,— ավելացրեց նա,— էլի միևնույն ճանապարհով ենք ետ դառնալու։ Վատ ճանապարհ է. քուրդերով լիքն էր. քանի անգամ քիչ մնաց ինձ փախցնեին։ Խեղճ հայրս ինչե՞ր էր քաշում. մայրս էլ նեղությունից ինձ էր անիծում։ Հասել էին գետափի կամրջի կողքին մնացած մի թումբի մոտ, մի հին բաղնիքի մնացորդ սենյակի ետևում։

— Խեղճ Նազիկս, —ասաց երիտասարդը՝ բռնելով նրա ձեռքը,— մի վախենալ. այս անգամ ես եմ հետներդ. դու գիտես, որ իմ կյանքը քեզ համար է միայն։

Աղջկա աչքերը սիրո արտահայտությամբ լցվեցին, սեղմեց երիտասարդի ձեռքը։

— Ներս մտնենք,— ասաց,— մայրիկը մենակ է։

Բաղնիքի այդ մնացորդ սենյակից դուրս էին խուժում այլանդակ ձայներ։

Նազիկը առաջ անցավ։ Պետոն հետևեց նրան։ Ներսում, այս, այն կողմ, բաց գետնի վրա թափվել էին կին, տղա, ծեր և աղջիկ, բոլորը ցնցոտիներով, կեղտոտ և խղճալի։

Մի անկյունում, փսիաթի վրա էր, որ պառկել էր Նազիկի հիվանդ մայրը։

Նրա դրությունը անհույս էր. այդ պարզ էր. ամեն ինչ քայքայվում էր նրա մեջ։ Դժգույն, աչքերը խամրած, թոշնած։ Գլուխը կոթնեցրել էր բարձի պես մի տոպրակի և աչքերն առաստաղին՝ տնքում էր ծանր կերպով։

Նազիկը մոտ գնաց ու չոքեց նրա գլխի մոտ։

— Կերակուր չբերի, մարե,— մրմնջաց նա,— Պետրոսը չթողեց. ասում է հերիք է մուրանք, շա՞տ անոթի ես, մարե։

Հիվանդ կինը նայեց ուշադրությամբ շրթերը պրկած գունատ երիտասարդին, հետո քիչ բարկացավ, հենվեց աղջկան և նստեց:

— Անոթի չեմ,— ասաց նա թույլ ձայնով,— գիտեմ արածդ, Պետրոս. գիտեի, որ եթե իմանայիր, այդպես էիր անելու... Աստված քեզ պահե... Մենք մեր դռներում շատերի ենք կերակրել. այս մուրացկանությունը, այս անկումը ինձ սպանեց:

— Գիտե՞ս ինչ, մարե՛.— խոսեց երիտասարդը,— ես կերթամ աշխատանք կգտնեմ և հաց կբերեմ ձեզ. անհոգ եղեք: Բայց ավելի լավն այն է, որ ետ դառնանք: Շատ ծանր է... Գնանք, մարե, գնանք էլի մեր հողը գտնենք, մեր ջուրը խմենք, մեր ձեռքով աշխատենք, մեր հացն ու մեր աշխատանքն ուտենք... Ի՞նչ կյանք է այս. չորս կողմդ օտար դեմքեր, որոնք զննում են քեզ ինչպես մի ջենեվերի և կամ ցավում են վրադ, խղճում են քեզ... Երբ խոսեցնում են, նրանց ձայնն իսկ վիրավորական է, նրանց քաղցրությունը բարկացնում է քեզ. զգում ես, որ խեղճ ես, խղճում են, ողորմելի ես և ողորմում են. ոչինչ չունես, և տալիս են... ինչո՞ւ: Չէ, գնանք, մեռնենք մեր հողի վրա, հպարտությամբ մեռնենք, թեկուզ անոթությունից...

Նստեց: Բաղնիքի մեջ մյուս կանայք ու տղամարդիկ լռել, նրան էին լսում: Իսկ նրա ձայնը դողում էր և խիստ հուզված էր:

— Գնանք,— շարունակեց նա,— ես մինչև իսկ լավ եմ համարում քուրդերից սպանվել, քան այսպես կյանք վարել: Ինչ է այս մեր վիճակը. այս թաց գետնի վրա անդամներդ են փտում, բորբոսնում. առանց ծածկոցի, ցուրտ, քամի... Մի կտոր հագուստ չունենք պատսպարվելու, մի քիչ տաք ջուր՝ մաքրվելու... Իսկ այնտեղ թողել ենք մեր արտ, մեր գութան, մեր տավարն ու մեր տուն, մեր օդն ու ջուր, անուշ, զզզուն ջրեր: Ահա գարունն էլ եկավ, կբացվին ծաղիկներ, օդը կլեցվի մեր թռչունների ճլվլոցով, Սասնո լեռներից հեղեղատներ կիջնեն... էհ, մարե, միտդ բեր մեկ այն սիրուն լեռներ, այն խոտն ու ձնծաղիկ, լալան ու մանուշակ... Վեր կաց, մարե, փառք աստծո, քանի ես կենդանի եմ՝ ձեզ դիպչող չի լինիլ. երկիր գնանք, թե լավ թե վատ, մեր տունտեղաց մեջ սթարվենք, հալբաթ մի կտոր հաց կլինի, որ առանց թուք ու մուրի կուտենք, վեր կաց, մարե...

Պառավի և բոլոր լսողների աչքերում արտասուքի կաթիլներ փայլեցին: Ամենքը սկսեցին մտքով պատկերացնել այն բոլորը, ինչ որ այնպես ոգևորությամբ նկարագրում էր Պետրոսը:

Իսկ քամին դրսում սուլում էր տխրագին և պտույտ գործում բաղնիքի ավերակների մեջ:

— Էհ, որդի,— խոսեց հիվանդը,— մեռնեմ արևուդ, իմ անուշ որդի. իմ օրերը համրված են. ես էլ մնացի այստեղ. շատշատ մի քանի օր էլ ապրեմ: Երբ թաղես ինձ, առ իմ Նազիկ, պահիր նրան, բայց տար երկիր և թող այս թշվառությունների մեջ չմնա: Թե քուրդեր սպանեն՝ թող գրկիդ մեջ մեռնի: Բարեկամներ կան այնտեղ, ծանոթների մեջ... գնացեք տունուտեղ եղեք, մի տեղ սթարվեք, էլ ձեռք մի պարզեք... Միմի անգամ էլ ձեր պառավ, օտար հողի մեջ թաղված թշվառ մորը հիշեք և ողորմիս ասեք:

Կոկորդը լցվեց. ձայնը պահ մի կտրվեց: Գլուխը դրեց բարձին և փակեց աչքերը:

— Երանի ձեզ,— շարունակեց նա մրմնջալով,— հազար երանի, որ էն սիրուն դաշտեր պիտի տեսնեք, էն զզզուն անուշ ջրեր խմեք, էն մեռոնի ծաղիկների հոտն առնեք... մեր ոչխարների, գառների մայոց լսեք, մեր արտի ցորեն ուտեք, այգու խնձորենու տակ նստեք...

Աստված իմ, աստված իմ, ինչ էի արել քեզ, որ իմ երկրից հեռու եմ մեռնում, ոսկորներս երկրիս հողին արժանի չես անում. . . ի՞նչ արի, ի՞նչ մեղք գործեցի:

Եվ լալիս էր խեղճ կինը:

Պետրոսը ավելի և ավելի հուզվում էր:

— Մարե,— ասաց նա,— հոգ մի անիլ, կլավանաս, քեզ էլ մեզ հետ կտանենք:

— Չէ՛, որդի,— աչքերը բաց արավ հիվանդը,— ես գիտեմ ասածս. իմ երկրիս արևն էլ չեմ վայելելու... Կյանքը ձերն է այժմ. դարձեք. մեր հողերի տերն եղեք:

Ճաշ ստացողները հետզհետե վերադարձան, ներս էին գալիս, իսկ հիվանդը բոլորովին ուժասպառ էր եղել: Ընկավ բարձի վրա, նորից աչքերը փակեց: Երկու երիտասարդները նստեցին նրա սնարի մոտ:

Գաղթականները նստեցին խոնավ գետնի վրա, և նրանց ճաշը սկսվեց:

Սուլում էր քամին դրսում, թնդացնում բաղնիքի պատերը. պտույտներ գործում ավերակների մեջ, հետզհետե մթնանում էր, և արեգակը ծածկվում սև ամպերի տակ...

5

Խստաշունչ ձմեռվա օրերը գրեթե անցնում էին. եղանակը մեղմանում էր, ձյունները հալվում էին, ջրերը՝ բացվում:

Ավերակների բնակիչները կես էին եղել: Շատերը մեռել էին, մի քանիսներին հաջողվել էր շարժել տեղացիների կամ շրջակա հյուրասեր գյուղացիների գութը, և գնալ լցվել նրանց գոմերը. ուրիշներն էլ այսայն պանդոկի մեջ էին ապաստանել: Շատ քչերն էին առհասարակ, որոնց հաջողվել էր ապրել, դիմանալ ցրտի և թշվառության:

Մեռնողներից մեկն էլ եղել էր Նազիկի մայրը: Նազիկը մնացել էր որբ: Այդ ժամանակ էր ահա, որ Պետոն սկսել էր իրագործել երկիր վերադառնալու ծրագիրը:

Նրան ասել էին, թե ինչ պետք էր անել: Չէր անցել տասն օր գարունը բացվելուց, որ նա զինված, Նազիկին էլ տղամարդու հագուստի մեջ ծածկած, Սասուն ու Մուշ գնացող ուրիշ վեց կտրիճ երիտասարդների ընկերակցությամբ ճանապարհ էր ընկել, անցել էր սահմանը և մտել էր թուրքաց Հայաստանի սահմանները:

Նրանք բոլորն էլ, Կարո անունով սասունցի երիտասարդի հետ, ճանապարհը լավ գիտեին: Պետոն վճռել էր նախ Գոմեր հանդիպել և աշխատել այնտեղ մնալու, ապա թե ոչ՝ բարձրանալ Սասուն: Քարոտ Տալվորիկի ամուր գյուղերում մտադիր էր պատսպարել իր Նազիկին և ապա իջնել Մշո դաշտը:

Թե ինչ պիտի աներ դաշտն իջնելուց հետո, այդ դեռ չէր որոշել, բայց նա լցվել էր մի խուլ, հետզհետե իր ամբողջ էությունը գրավող՝ զայրույթով:

Թուրքահայ հողը մտնելուն պես, խումբը նկատեց, որ իրենց հետևում են: Հեռվից երբեմն երևում էր բարձրությունների վրա մի քուրդ ձիավոր, որ մի վայրկյան կանգնած դիտում էր

նոցա, հետո անհետանում, և երբ երիտասարդները հրացան ի բռին անցնում և ոչինչ չէր պատահում:

Երեք անգամ, մինչև Բասեն էին կտրում, նրանք ուզեցին գնդակահար անել մի քուրդի, որ իր «կուլափի» մեջ փաթաթված՝ հանկարծ ցցվում էր ժայռի կամ մի բլրի գլխին, այնտեղից խորապես զննում նրանց, հետո ետ քաշվում և անհետանում մյուս կողմը:

Պետոն, մանավանդ Կարոն, սրտնեղությունից կատաղում էին, երբ միշտ կռվի էին պատրաստվում. լարված դրության մեջ էին մտնում, սպասում էին հարձակումների և սակայն ոչինչ չէր պատահում:

— Այստեղ մի բան կա,— ասում էր Կարոն,— երևի սպասում են, որ մեզ մի նեղ անցքի մեջ բռնեն։ Եվ աշխատում էին քայլել միշտ այնպիսի տեղերից, ուր կարողանային հանկարծակի հարձակման ժամանակ՝ պաշտպանողական և շարժվելու տեղ ունենալ:

Լրտեսությունը կառավարության կողմից լինել չէր կարող։ Կառավարության զափթիեները կմոտենային իսկույն և «հանուն օրինաց» կկռվեին կամ կկողոպտեին. պետք եղած ժամանակն էլ՝ առանց կռվի կսպանեին և կերթային հայտնելու, որ «ապստամբների» են սպանել:

Բասենից հետո ճանապարհորդները մի նոր բան էլ սկսեցին նկատել:

Երկիրը առաջվա դրության մեջ չէր. ամեն քայլափոխում ասպատակների նոր շինած ավերակների, կողոպտված գյուղերի և այրած տների էին պատահում. ամեն կողմից քուրդ գնդերի բարբարոսության մասին էին լսում. գալիս էին այն եզրակացության, որ անձնապաշտպանության համար հարկավոր էր գնդակահար անել յուրաքանչյուր պատահած քուրդի:

Այդ մտքով ղեկավարվելով, երբ նրանք իններորդ օրը Խնուսից անցնում մտնում էին Մշո երկրի լեռները, մի հովիտի սկզբում, գիշերով, Կարոն հանկարծ կանգ առավ, բարկության մի շարժում գործեց, լարեց հրացանը դեպի մի բլուր և կրակեց:

— Հոգիներս հանեցին անիծածները.— մռմռաց նա:

Գիշերային լռության մեջ հրացանի ձայնը որոտման պես թնդաց։ Բարձրության վրա մի քուրդ էր, որ կծկվել՝ լրտեսում էր. գնդակը ստանալով՝ նա մի ճիչ հանեց, հետո գլորվեց ետ և անհետացավ բլրի ետևում:

— Այդպես,— ասաց Կարոն,— այսուհետև ամենքին էլ այդպես եմ ընդունելու. խելք ունին՝ թող չերևան:

Այնուհետև նրանք մտան հովիտը և առաջացան դեպի ցած երևացող մի ժայռոտ բարձրություն, որի մոտի ձորով նրանք մտնելու էին Մշո երկիրը:

Հազիվ թե կես ժամ արշավակի քայլել էին նրանք, Գաբրիելը բռթեց Կարոյին և ասաց.

— Նայիր այդ կողմը... Հեռվից, այս անգամ մի ձիավոր էր, որ մյուսների պես փոխանակ լրտեսելու, սրարշավ մոտենում էր:

— Հը՛մ,— արեց Պետոն,— վերջապես կիմանանք, թե ինչ են ուզում մեզնից։ Կանգ առնենք, տղերք, և զգուշություն. մի քանիսը թող ամեն կողմը լավ զննեն առանց շարժվելու։

Ձիավորը մոտենում էր այնքան արագությամբ, որ ցայտեցնում էր սառած ձյունի կտորներ։ Նրա նիզակը ցցված երևում էր աջ ոտի կողմից, իսկ ուսագլխի վրա փողփողում էին վահանն ու հրացանը։

Լուսնկա գիշերով նրա ստվերը երկարորեն գծվում էր ձյունի սպիտակության վրա։

Երբ բավական մոտեցել էր խմբին, հանեց ուսից հրացանը, ծնկի վրա դրեց, հետո ձիու սանձը քաշեց և պահ մի կանգ առավ։ Պետոն ուղղեց դեպի նա իր հրացանը և բարձրաձայն գոչեց.

— Ի՞նչ ես ուզում, կռռ...

— Ես կռիվ չեմ ուզում առայժմ,— պատասխանեց քուրդը,— ուզում եմ ձեր գլխավորի հետ խոսել։

— Մոտեցիր,— ձայնեց հրամայական Պետոն, և երբ քուրդը քիչ էլ մոտ եկավ, ասաց,— խոսի՛ր, ի՞նչ ես ուզում։

— Ուրիշ քուրդեր էլ, նայեցեք,— ասում էր այս միջոցին Գաբրիելը Կարոյին։

Եվ իրավ, հորիզոնի վրա, սակայն դեռ շատ հեռու, երևում էին սև կետեր։

Քուրդը կանգնեց մի քանի քայլ հեռավորության վրա և ասաց.

— Դուք որտեղացի՞ եք։

Պետրոսը դեմքը կնճռեց և ասաց խրոխտ.

— Մեզ ոչ ոք իրավունք չունի հարց տալու, այլ պարտավոր է միմիայն պատասխանել. ի՞նչ է ուզածդ, ասա և ապա կորիր գնա...

Քուրդը նախ ձեռքը դաշույնին տարավ, ապա զսպեց իրեն և հպարտությամբ ասաց.

— Գիտցեք, ուրեմն, որ ինձ ուղարկել է իմ աղան. նա ուզում է իմանալ, թե դուք որտե՞ղ եք գնում։

— Ձեր աղան շատ հետաքրքրվող է.— ժպտեց հեգնությամբ Պետոն,— իսկ շատ հետաքրքրվողը շուտ կծերանա... դարձիր, գնա և այդպես ասա նրան։

Այն ժամանակ քուրդը ցնցեց վրայի վերարկուն և ասաց խիստ գոռոզությամբ.

— Ես Համիդեի զորքից եմ...

— Ուրեմն ավելի վատ սրիկա ես.— ընդհատեց նրան Պետոն։

— Ահա իմ նշանները,— շարունակեց քուրդը և ցույց տվեց կապայի վրայի գոտին ու գլխարկի նշանը։

— Պղնձի կտորներ.— հեգնեց Կարոն,— և բավական արյունոտ...

— Իմ աղան,— շարունակեց քուրդը,— Համիդեի զորքի փաշան է. . . Նայեցեք հեռու, ահա այնտեղ ինձ է սպասում 50 զինվորով. պատասխանեցեք ինձ:

Կարոն անհամբերությունից շրթունքն էր կրծում, ոտքը առաջ դրեց և գոչեց քուրդի երեսն ի վեր.

— Աղայիդ ասա, որ քուրդերեն առածը չմոռանա. «շատ հետաքրքրվողը, շուտ էլ կսատկի», այս վերջին երկու բառը ես եմ փոխում և հատկապես՝ աղայիդ համար. . . դեհ, մեջքդ մեզ ցույց տուր, ապա թե ոչ աղայիցդ շուտ դժոխք կերթաս. . .

Քուրդը ծիծաղեց լրբությամբ:

— Լավ ուրեմն, ասելիքս ասեմ,— գոչեց նա,— ձեզ սահմանագլխից հետևում են մեր մարդիկ...

— Որոնցից մեկը կարծեմ այն բլրի ետևի հողն է համբուրում.— ծաղրեց Կարոն:

— Ֆլան շատ ծաղրածու է,— ասաց նրան քուրդը,— բայց երբ ձեռքս ընկնես, իմ աղան լեզուդ կտրելու է և իր վրանի առաջ կախելու... բայց ես շարունակում եմ: Ձեզ հետ կա Մշո Գոմեր գյուղից մի աղջիկ, տղամարդի հագուստով, ահա, կարծեմ նա է. . . լավ, իմ աղան ուզում է այդ աղջկան. տվեք և ազատ ձեր ճանապարհը գնացեք:

Պետոն սաստիկ գունատվեց և մեքենայորեն ասաց.

— Աղաղ խաբվում է. մեզ հետ աղջիկ չկա:

Նազիկը ետ քաշվեց և պահվեց մեկի ետևում:

— Ֆլան խաբում է,— գոչեց քուրդը,— ֆլանները խաբեբա են լինում. մեր լրտեսները վաղուց հետևում են ձեզ. վերջինը այժմ հասավ և հայտնեց, որ աղջիկը ձեզ հետ է: Նրանցից մեկը բավական ժամանակ է, որ Կարս էր և քայլ առ քայլ հետևում էր աղջկան: Ավելի լավ է տվեք աղջիկը, և ձեր կյանքին չենք դիպչի, թեև կուզեի ես բոլորիդ մորթել և այդ լավ հրացանները ունենալ:

Պետոն այժմ հասկացավ, թե ով է այդ նոր փաշան: Բաքրանցիների ցեղապետ Յուսուֆ աղան է, Գոմերն ավերող և Նազիկին փախցնել ուզող քուրդը:

Արյունը գլխին խփեց. մի վայրկյան անխոս մնալուց հետո, ձեռքը դաշույնին տարավ և կատաղությունից հուզված ձայնով ասաց.

— Գնա այժմ և աղայիդ ասա, որ իր նման շներին ընդունելու համար գնդակ ունենք, եթե աղջիկ է ուզում, թող գա. ես նրան ահա թե ինչ կտամ:

Աջ ձեռքով մտրակը ցույց տվավ և շարունակեց.

— Այժմ կորիր, ստրուկ. . . և ասա աղայիդ, որ գոմերցի Պետոն սպասում է նրա կաշին քերթելու. . .

Քուրդը ցնցվեց ոչ միայն այդ կծու խոսքերից, այլև Պետոյի անունը լսելուց. մի սպառնական շարժում գործեց, բայց Պետոյի պարզված ձեռքը և ակնարկը զսպեց նրան: Նա լռությամբ

դարձրեց ձիու սանձը, մտրակեց նրան, ոստնուլ տվեց, ապա մի խուլ հայհոյանք լուտեց և սաստիկ արագությամբ հեռացավ:

Նրա գնալուց հետո մի րոպե գրեթե ոչ ոք չխոսեց և ոչ ոք տեղից չշարժվեց:

— Այսպես ուրեմն.— ասաց վերջապես Պետոն,— այդ շունն է դարձյալ. . .

— Պետք է մի տեղ ամրանալ, Պետո,— միջահատեց նրան Կարոն,— ժամանակ է շտապել:

— Գնանք այդ ժայռոտ կրծքի վրա եղող քարայրները,— ասաց Գաբրիելը,— ես գիտեմ, շատ ամուր դիրք է:

Համաձայնություն կայացավ. պետք է պաշտպանվել. հորիզոնի սև կետերը սպառնալից էին և դեպի նրանց գնացող ձիավոր քուրդը քիչ հետո հասնելու էր հրավիրելու կռվի:

Շտապեցրին քայլերը, լռությամբ կտրեցին հովիտն ու մագլցել սկսեցին քարոտ ստորոտից դեպի բլրակի ապառաժոտ կուրծքը, որի վրա, բարձրում, երևում էին երկու մութ քարայրներ:

Կես ժամի չափ սողոսկեցին, անցան նեղ կածաններից, պտույտ արին ժայռերի միջից և, վերջապես, Կարոն ամենից առաջ ոտ կոխելով առաջին քարայրի տափարակի վրա, ձեռք տվեց Նազիկին: Միմյանց ետևից մյուսներն էլ հասան, կանգ առին և ետ նայեցին:

Քուրդ ձիավորների խումբը սկսել էր շարժվել և մեծանում էր: Քսան րոպեի բան էր նրանց հասնելը մի այնպիսի հեռավորության վրա, որտեղից գնդակ կարող էր հասնել քարայրներին: Բազմաթիվ էին նրանք: Չէին շտապում, հանդարտ ու կանոնավոր արշավանքով առաջ էին գալիս այն որսորդների պես, որոնք ապահով են, որ որսն այլևս չէ խուսափելու:

Քարայրները, ուր մտան Պետոն ու ընկերները, խոր չէին. փոս էին ներսից և պատսպարված դրսից եկող գնդակներից: Գետնից շատ բարձր էին և տիրում էին դաշտի վրա. նրանց երկու կողմի շավիղները այնքան դժվար էին ու նեղ, որ երկու հոգով կարելի էր լավ պաշտպանել մուտքերը: Առաստաղից թափված կավախառն ավազը չոր էր պահել հատակը և մի քանի օջախների մնացորդներ ցույց էին տալիս, որ նրանք ծառայում են եղել իբր փարախ:

Կարոն կտրեց առաջին քարայրը երկրորդից բաժանող մեծ մացառը և մի ընդհանուր տափարակով երկու քարայրները միացան:

Երբ հասան, ամեն մեկը նստեց քիչ հանգստանալու: Լուռ էին, բայց աչքերնին հառած հեռվում երևացող քրդերի խմբին...

— Լավ եկանք,— խոսեց քիչ հետո Պետոն,— բայց բանտարկվեցինք. քիչ հետո կհասնեն. մեր ձյունի վրա թողած հետքերը նրանց կպատմեն մեր տեղը և... չգիտեմ ինչ է լինելու մեր վերջը. նրանք շատ են և դաշտի վրա... մեզ մնում է մեռնել միայն...

Ոչ ոք չխոսեց:

— Ի՞նչ եք կարծում,— հարցրեց Կարոն քիչ լռությունից հետո,— ցածից արձակված գնդակները չե՞ն կարող մեզ վնասել:

— Չեմ կարծում, եթե միշտ ներսը մնանք,— պատասխանեց նրան երիտասարդներից մեկը:

— Մոտենում են,— հայտնեց չորրորդ երիտասարդը, որ ավելի դեպի մուտքն էր գտնվում,— նայեցե՛ք, որքան շատ են...

Բոլորը դարձան դեպի դաշտը։ Խումբը մոտենում էր. նրանց նիզակները ֆոնի վրա երերում էին, իսկ վահանների գամերն ու հրացանների փողերը փայլում լուսնի աղոտ լույսի տակ։ Բազմաթիվ էին, բոլորը ձիերով և լավ զինված։

— Պատրաստվենք, տղերք,— գոչեց Պետրոսը,— ս. Կարապետ մեզի քոմագ... Հրացաններիդ աչք խփեք. ետ քաշվենք, և թողեք ինձ դիտելու թշնամու քայլերը։

Մյուս վեց երիտասարդները ներս քաշվեցին։ Պետոն փորսող տալով մոտեցավ տափարակի ծայրին, աշխատեց քարայրի ձգած ստվերի մեջ մնալ և սկսեց դիտել։

Քուրդերը հառաջացան բավական տեղ, կանգ առին, խմբվեցին և շրջապատեցին իրենց մեծավորին։ Մի քանի րոպե հետո նրանք նորից բաժանվեցին և ավելի կամաց քայլելով՝ գնացին դեպի քարայրները։ Մեկ-մեկ համրվում էին. բոլորն էլ Համիդիե զորքի նշաններն ունեին իրենց քրդական հագուստի վրա։

Երբ մոտեցել էին այն կետին, որտեղից սկսվում էր ժայռի ստորոտը, քուրդերից շատերը ձիուց իջան և հրացանները լարեցին։

— Պատրաստ կացեք,— դարձավ Պետոն ընկերներին,— սկսում են հարձակումը, սողոսկելով մոտեցեք ինձ և երկու հոգի ձեզնից աջ, իսկ երկուսը՝ ձախ հսկեցեք գնդակահար անելու մագլցողներին։

Այդ միջոցին ճայթեց մի չոր բան կարծես. արձագանքը թնդացրեց հովիտը և մի գնդակ եկավ թռցնելու մի քանի ժայռի կտոր, քարայրներից երկրորդի գլխի վերևում։

Այդ առաջին ճայթյունը դողեցրեց պաշտպանվածներին. Մարթինի զորեղ և հեռաձիգ հրացանի ձայնն էր։ Նազիկը քաշվել էր բոլորովին խորքը և կծկվել մի անկյունում։

— Կրակ չանեք, տղերք,— հրամայեց Պետոն,— սպասեցեք իմ ասելուն։

Առաջին հարվածից հետո քուրդերը լռեցին։ Խոր լռություն տիրեց երկու կողմից էլ։ Էլի պաշարողները հավաքվեցին իրենց աղայի շուրջը, էլի մեկը նշան դրեց առաջին քարայրը և մի գնդակ ուղղեց նրա ներսը։

Գնդակը գնաց, ներս մտավ, բայց առաստաղից ցած չիջավ և այնտեղից գետին թափեց քարի կտորներ։ Նազիկը սարսափահար՝ ճիչ արձակեց։ Գունատ՝ դողում էր։

— Ոչինչ,— դարձավ նրան Պետոն — քաջ եղիր և մի վախենալ. տեղիցդ որ չշարժվես, գնդակը երբեք քեզ չի հասնիլ։

Երկու գնդակից հետո քուրդերը երրորդ անգամ հավաքվեցին։ Այս անգամ խորհրդակցությունը երկար տևեց։ Հետո մեկեն նրանք միմյանցից բաժանվեցին և մոտ 20-30 հոգի, զանազան ուղղությամբ, ոտավոր և հրացանի բռին, սկսեցին քարերի միջից դեպի վեր՝ քարայրները բարձրանալ։

— Գալիս են, — ասաց Պետոն,— աչքերնիդ չորս բաց արեք...

Քրդերը մտել էին քարերի մեջ, ծածկվում էին նրանց ետևում, տափականում, սողոսկում էին՝ աշխատելով օգտվել յուրաքանչյուր թփից կամ բարձրությունից ու քարերից, նրա ետևը պահվելու համար:

Պետրոսը գունատ նայում էր և հազիվ կարողանում էր նշմարել եկողներից մեկի կամ մյուսի մեջքը կամ գլխի մասը:

— Պետք է կրակել,— ասաց նա,— դրությունիս վատանում է. տղերք, հենց որ մի ծայր տեսնեք՝ կրա՛կ...

Անցավ մի լուռ րոպե, հետո Կարոն շարժվեց, լարեց հրացանը. թռավ գնդակը, լսվեց մի աղաղակ և քարերի միջից դեպի ցած գլորվեց մի քուրդի մարմին:

Այդ առաջին հարվածը հրավիրեց իր վրա դաշտում կանգնած քուրդերի գնդակների կարկուտ. մի քանի րոպե վերից ու ներքևից փոխադարձաբար միմյանց վրա էին տեղում գնդակներ, լսվում էին ճիչեր, գլորվում էին մարմիններ:

— Տղերք, իզուր գնդակ մի փչացնեք,— գոռում էր Կարոն րոպե առ րոպե՝ արձակելով իր հրացանը:

Բայց նրանք ստիպված էին այժմ փոքրինչ երևցնել իրենց գլուխը՝ կռացնելու համար հրացանը դեպի մագլցող քուրդերը: Եվ այդ սկսեց վնասել նրանց. առաջին իսկ կռանալու ժամանակ տղերքից մեկը զարնվեց և գնաց թավալգլոր դեպի ցած:

Հրացանաձգությունը շարունակվեց. քուրդերից անդադար ընկնում էին. ձիավորները դեսուդեն էին արշավում:

Հանկարծ Կարոն էլ ձեռքից բաց թողեց հրացանը, հետո բարձրացավ, ձեռքը գլխին տարավ և գոռաց.

— Զարնվեցա՛...

Ու ետ ընկավ շանթահարի նման:

Պետոն դեմքը կնճռեց, կոկորդը դառնացավ, բայց տեղիցը չշարժվեց ու շարունակեց հրացանել: Քուրդերը մի քանի քայլ միայն բարձրացել էին, բայց պարզ երևում էր, որ շուտով գրավելու էին քարայրները, մանավանդ որ անհնար էին դարձնում իրենց զարնվելը՝ թաքնվելով, դաշտի վրա կանգնածներն էլ ջլատում էին հայերի ուժը:

Պետոն այդ ժամանակ ետ նայեց: Մնացել էին չորս հոգի: Նազիկը ոչինչ. նա ոչ զենք բռնել գիտեր և ոչ էլ սիրտ ուներ կռվելու:

Եվ կանգ առավ: Զգաց, որ ժամանակ է խուսափելու. տասը րոպե ևս, ամեն ինչ վերջացած կլիներ, կբռնվեին՝ վանդակի մեջ փակված թռչունների նման, առանց կռվել իսկ կարողանալու:

— Տղերք,— ասաց նա խուլ ձայնով,— ով կարող է, թող դուրս թռչի քարայրից. մագլցի լեռն ի վեր. այնտեղ կամ կմիանանք կամ ոչ. ժամանակ է, սակայն, որ ամեն մարդ իր կյանքի վրա մտածի:

Երիտասարդները դադարեցին կրակելուց և Պետոյին նայեցին:

— Այո,— կրկնեց նա,— իզուր է. տեղերնիս նեղ է և կռիվը՝ անհավասար. միակ փրկությունն է բարձրանալ տափարակի վրա և ազատվել փախչելով կամ պահվելով: Շուտ անենք: Գնանք, Նազիկ:

Ամեն ոք շտապեց դեպի դուրս: Պետրոսը Նազիկին դեպի ձախ տարավ և մտան ժայռերի մեջ, որոնք այդ կողմում թափվել էին միմյանց վրա կտոր-կտոր, շատ տեղ աստիճաններ կազմել, կամարներ և շատ տեղ էլ՝ քարի հեղեղատներ:

Այդպիսով դյուրանում էր վերելքը. մանավանդ, որ դժվար տեղերում Պետոն սահում էր դեպի վեր, հետո ծնկան վրա գալիս և վեր քաշում Նազիկին: Ժայռի կտորներ էին պոկոտվում և շառաչյունով գլորվում ցած՝ նրանց ետևից, բայց այդ բոլորը անլսելի էին, որովհետև դաշտի վրա կանգնած քուրդերը դեռ գնդակներ էին տեղում քարայրների վրա:

Այդ նշան էր, որ մագլցող քուրդերը դեռ քարայր չէին հասել:

Երբ հասան վերև և այնտեղ Պետոն կանգ առած՝ թողեց Նազիկին քիչ շունչ առնելու, ցածում հրացանների ձայներ լսվեցին, հետո անցան մի քանի լուռ րոպեներ: Պետոյի մյուս ընկերները չէին երևում. ով գիտե ինչ էին եղել. բռնվել, զարնվել էին, թե՞ փախել թաքնվելով ազատվել:

Պահ մի խոր լռությունից հետո հանկարծ լսվեցին մի քանի թույլ հրացանաձգություններ, ապա վայրենի աղաղակ հարձակման և այդ բոլորը ապացուցին, որ քուրդերը գրավել էին քարայրը և ստուգել, որ իրենց որսը անհետացել էր:

Ուրեմն հետապնդելու էին: Ձիով անկարելի էր, հարկավոր է մի քանի ժամ, որ կարողանային ձորի կողմից հասնել այդ տափարակին. քուրդերն անշուշտ ոտքով կհետևին:

Այդպես էր մտածում Պետոն: Ուրեմն դեռ ապահով չէին. հարկավոր էր քայլել, գտնել մի ուրիշ ապաստարան և կամ մի կերպով կորցնել տալ իրենց հետքը:

Ցուրտ էր: Երկինքը ամպոտել էր սկսում. արևելքից մի մեծ ամպ փշրվել էր և ցանցառացած բրդի նման տարածվում էր, սփռվում լուսնի երեսին, հետո կուտակվում էր ետևից հասած ուրիշ ամպերով և գիշերը մթնացնում:

Երկու երիտասարդները քայլում էին արագությամբ. ոչինչ չէր երևում նոցա, բացի հեռավոր, ձյունալից բարձրություններ և մութ, ամայի դաշտ:

Կոխոտում էին տաքությունից նախ փափկացած, բայց այժմ կիսովին սառող ձյունը և ի մեծ ցավ Պետոյի, նշմարելի ոտքի հետքեր էին թողնում: Ձյուն գալուց ի վեր այդ կողմերում ոչ մի մարդկային ոտք չէր կոխել. սպիտակ անբիծ մի սավան էր ծածկում կարծես անհուն տարածությունը, որի միակ եզրը կազմում էին հեռվում երևացող ժայռի սև խոշոր կտորներ:

Պետոն ու Նազիկը դեպի այդ ժայռի կտորներն էին հառաջանում. կտորներ, որոնք այնտեղ ցրված կային, ով գիտե մնացորդ որպիսի լեռից:

Ձյունը քիչ խշրտում էր, և ոտքը շատ խոր էր գնում նրա մեջ: Ամայի էր ամեն կողմ. ոչ մի ձայն:

Հաճախ Պետոն ետ էր նայում սրտատրոփ և սպասում ետևի կողմից եկող գնդակներին։ Բայց երկինքը մթնանում էր, և հեռավորությունը աննշմարելի մնում։ Այդ հանգամանքը սկսեց նրան քիչ մխիթարել. գուցե կարողանային անտեսանելի մնալ, հասնել այդպես մի գյուղ, մի տեղ թաքնվել. . . կամ ով գիտե. . .

Այդպես էր Պետոն մխիթարում իրեն, երբ հանկարծ օդի մեջ սուլեց մի գնդակ և ճիշտ նրանց գլխի վրայից անցնելով՝ գնաց անհետացավ խավարի մեջ:

— Տեսնվում ենք,— գոչեց հուսահատությամբ Պետոն՝ առաջին տպավորության տակ,— տեսնվում ենք. ուրեմն շատ մոտ ենք...

Կանգ առավ և ետ նայեց։ Հեռվից շատ բաներ վատ էին երևում, բայց մթությունը ծածկում էր ամեն ինչ և նա, որ քիչ առաջ օրհնում էր խավարը, այժմ անեծք էր կարդում նրա դեմ, որ արգելք էր լինում տեսնելու՝ թե ինչ հեռավորության վրա էին հալածողները:

Մի քանի րոպե ուշադրությունը լարած նայեց Պետոն, հետո հանկարծ ցնցվեց և ժպտելով ասաց.

— Ա... հիմա իմացա:

Իմացել էր։ Քուրդերը հրացան էին արձակել, նայելով հետքերի ուղղությանը մանավանդ, որ Պետոն միշտ ուղիղ գծով էր քայլում:

— Հետևիր ինձ,— ասաց նա Նազիկին։ Ապա փոխեց ուղղությունը քիչ դեպի աջ և սկսեց գնալ դեպի ժայռերը՝ այս անգամ ծուռ գծով:

Պարզ էր սակայն, որ նրանց ետևից գալիս էին. դա անհանգիստ արեց Պետոյին։ Եթե ինքը մենակ լիներ, շատ հեշտությամբ կարող էր արագացնել քայլերը և անշուշտ կազատվեր. իսկ այժմ իր հետ կին կար, որ հետզհետե թուլանում էր, հոգնում էր, չէր կարողանում ոչ միայն արագ քայլել, այլ սկսում էր ետ մնալ, կքվել:

— Քայլիր,— գոչում էր նա հուսահատությամբ, բռնած Նազիկի թևից և գրեթե կոպտությամբ,— քուրդերը հասնում են:

Խեղճ աղջիկը ճիգ էր գործում, սեղմում էր ատամները, աշխատում էր քայլել, բայց ոտները ծանրանում էին. կայթում էր, շնչասպառ լինում. . . աչքերը արտասուքով լցվել էին, մարմինը՝ քրտնաթոր. . .

Քայլեց, քարշ եկավ, թափեց ինչ որ ուժ ուներ, բայց վերջապես կանգ առավ շնչասպառ և հազիվ կարողացավ թոթովել.

— Էլ չեմ կարող, թող ինձ այստեղ:

— Քուրդերի՞ն թողնեմ.— բացականչեց Պետրոսը:

— Սպասիր ուրեմն,— նստեց Նազիկը,— էլ չեմ կարող, էլ ուժ չմնաց:

Այն ժամանակ Պետոն ուսին ձգեց հրացանը, հետո ելավ նստեց Նազիկի առջև, մեջքը նրան դարձրեց և ասաց վճռողաբար:

— Շուտ, մեջքիս վրա ելիր. . . Տուր ձեռքդ... այդպես, լավ... հանգիստ կաց. . .

Ու արագությամբ շալակեց աղջկան, բարձրացավ և սկսեց քայլել:

— Աստված իմ,— գոչեց Նազիկը,— այդ ի՞նչ արիր. Պետրոս. . .

— Ինչ որ պետք էր,— ասաց երիտասարդը,— գրկիր վիզս և հանգիստ մնա. . . լավ, այդպես: Նազիկը քնքշությամբ գրկեց Պետոյին և մի ջերմ համբույր դրոշմեց նրա վզի վրա:

— Որքան բարի ես,— ասաց նա:

— Բարի՞,— ժպտեց Պետոն,— սիրում եմ քեզ և քրդին չեմ տալ քեզ:

Երկինքը ավելի և ավելի մթնանում էր: Աղջիկը հոգնած էր և ահագին ծանրություն դարձավ երիտասարդի վզի վրա: Նա այդ զգում էր, որովհետև Պետոն էլ շուտով սկսեց հոգնել. քրտինքը վրա տվեց. տաքացավ նա, հևալ սկսեց ծանրության տակ, դանդաղացրեց քայլերը:

— Իջնե՞մ.— խոսեց Նազիկը:

— Ոչ, ոչ, դեռ քայլել չես կարող:

Եվ բավական գնաց այդպես: Երբեմն միայն կանգ էր առնում և ետ նայում: Այժմ հեռվում սկսում էր նշմարվել շարժման մի մեծ կետ, մի քանի քրդեր էին, որ վազում էին:

Պետոյին տիրում էր հուսահատությունը, չգիտեր ինչ անել: Աչքով մի թաքստոց էր փնտրում, մի ծակ, մի խորշ... Սակայն, բացի տարածությունից և նրա վրա ցանված կտորկտոր փոքրիկ ժայռերից՝ ոչինչ չէր երևում:

Քայլերն ավելի ամրապես էին դրոշմվում ձյունի վրա: Այդ նրան կատաղեցնում էր: Անիծեց ձյունը, անիծեց ձմեռը, անիծեց և շատ ուրիշ բաներ. . . բայց աղջիկը ծանրանում էր նրա ուսին, նրա վերջին ուժերն էլ սպառում:

Այլևս շարունակել հնար չկար. ծնկները կթոտեցին. կանգ առավ, ցած սահեցրեց բեռը և ասաց.

— Կարող ես քիչ քայլել. . . մինչև որ հանգստանամ:

— Կքայլեմ, իմ խեղճ Պետրոս, ես չէի ուզում, գիտեի, որ ծանր եմ:

— Լավ, լավ, այժմ քայլենք և. . . շուտ:

Այդ միջոցին նորից փայլեց ետևի կողմից մի լույս, և նորից մի գնդակ ճղեց օդը:

— Այժմ ավելի մոտ են.— ասաց Պետրոսը,— նրանք վազում են. շտապենք մի տեղ պահվելու:

— Որտեղ,— մռմռաց Նազիկը հուսահատ,— չէ որ նրանք տղամարդիկ են և վազում են, իսկ ես արդեն հոգնել եմ. և հետո, ուր թաքնվենք, չէ՞ որ մեր հետքերը երևում են: Այդ խոսքերն իրենց ճշտությամբ Պետոյին էլ հուսահատություն ազդեցին: Նա կանգ առավ և սրտնեղությամբ ասաց.

— Լավ ուրեմն, սպասենք և մեռնենք:

Նազիկը շատ չքայլեց։ Հարյուր քայլ անելուց հետո նորից կանգ առավ և նստեց մի քարի վրա։ Պետրոսը բարկությունից դողալով հրացանը ձեռքն առավ և լարված կանգնեց նրա կողքին։

Բայց մի րոպե հետո նրա բարկությունը իջել էր։ Կռացավ դեպի նշանածը, աջ ձեռքով գրկեց նրան և հարցրեց քնքշությամբ.

— Մի՞թե էլ չես կարող քայլել, Նազիկ։

Աղջիկը հուսահատ կերպով դեմքը ծռմռկեց, նրան նայեց, հետո ձեռքերովը գրկեց նրա գլուխը, դեմքը դրեց նրա ուսի վրա և ասաց.

— Ո՛չ, էլ ուժ չմնաց... Սպանիր ինձ, և թող մեռնեմ գրկիդ մեջ...

Մի սպանիչ, խոր դառնություն սեղմեց Պետոյի կոկորդը, և նա գոչեց հուզված.

— Աստված իմ, աստված իմ... ի՞նչ անեմ։

— Գիտե՞ս ինչ, Պետրոս,— ասաց Նազիկը թույլ ձայնով։ — Մտնենք այդ քարի ետևը... Սպասիր, ինձնից մի զատվի. թող գրկիդ մեջ մնամ... լավ, այդպես... այնքան հոգնել եմ, այնքան հոգնել... Մի՞թե դու չես հոգնել... Ախ, ինչպես երեխայի նման շալակել, տանում էիր ինձ...

Ու ծիծաղում էր, ատամները կափկափելով ծիծաղում թշվառ աղջիկը։

Հետո թուլացավ, սեղմեց ջղաձգությամբ երիտասարդի գլուխն իր կրծքի վրա և սկսեց անվերջ համբույրներով ծածկել նրա դեմքը։

Մի րոպե ոչ մի երջանկություն չէր կարող հավասարվել նրանց ինքնամոռացության... Մոռացել էին ամեն ինչ՝ մոտեցող քուրդերը, մահը, ցուրտը...

— Օ, որքան, որքան սիրում եմ քեզ.— մրմնջում էր Նազիկը տենդային խանդով սեղմվելով երիտասարդի գրկում, — թող գան այժմ քուրդերը, եթե չզարնեն ինձ և տանել ուզեն, դու սպանիր ինձ... Կանես, չէ՞, չես թողնի, որ նրանց պիղծ ձեռքերը դիպչեն ինձ... որքան կուզեի, մեռնել, մեռնել այսպես գրկիդ մեջ, երջանիկ րոպեում...

— Իսկ ես, ես ի՞նչ կլինեմ,— ասաց Պետոն,— ի՞նչ պիտի անեմ, եթե դու մեռնես։

— Օ՜, իմ Պետրոս,— մրմնջաց Նազիկը,— ես էլ քեզնից բաժան ապրել չեմ կամենում... Մեռնենք միասին. այդ լավ է... Երևում է, որ իրավունք չենք ունեցել երջանիկ լինելու... Ոչ... հայրս էլ հաճախ ասում էր, որ մեր ճակատի գրածը թշվառություն է, հալածանք... Ինչո՞ւ այդպես է, չգիտեմ... Ինչո՞ւ գողերը, ավազակները ավելի լավ ճակատագիր ունեն... Դու այդ գիտես, Պետրոս...

Նրա ձայնը թուլանում էր. նույնպես և մարմինը. լիովին ամփոփվել, կուչ էր եկել երիտասարդի գրկում և աչքերը փակվել էին։

— Մոտեցիր... գրկիր ինձ,— մրմնջում էր նա...— մրսում եմ կարծես... այդպես... օ, ինչ լավ է...

Եվ երբ քիչ լուռ էին, շարունակեց մեղմ ձայնով.

— Երբ ես կմեռնեմ... դու ապրիր... ապրիր, և իմ մորս, հորս, մեր գյուղացիների . . . բոլորի վրեժն առ . . . և ապա եկ ինձ մոտ... կանես, չէ՞...

Հանկարծ Պետոն մտաբերեց քուրդերին և աչքը բարձրացրեց։ Տեսավ, որ մոտենում էին և մինչև իսկ որոշեց, որ երեք էին։

Նա շտապով բաց թողեց գրկից Նազիկին։

— Գալիս են.— ասաց,— զոնե պաշտպանվելով մեռնենք... ինչ լավ կլիներ, եթե դու էլ հրացան արձակել գիտենայիր և այժմ մի հատ ձեռքդ լիներ . . . մենք երեքին էլ կփոեինք գետին . . .

Հետո առավ հրացանը, մի վայրկյան լարեց, և երբ երեք քուրդերը կանգ էին առել հետքերի ուղղությունը քննելու, կրակեց։

Բոցը վիժեց փողից որպես մի խուրձ շանթ, սլացավ մթության մեջ, հետո լսվեց մի սուլում և մի աղաղակ։ Մի քուրդ ընկել էր։ Իսկույն երկու գնդակներ եկան դեպի նա։ Մեկը տափակացավ ժայռի վրա, իսկ մյուսն անցավ գլխի վրայից։

Դրանից հետո քուրդերը մի քանի ոստյուն գործեցին և մտան քարերի ետևը։

Անշուշտ նոքա իմացել էին հետքերից, որ անցել էր մի մարդ, բայց այդ մարդը ուսերի վրա ուրիշին ուներ։ Եվ խորամանկ քուրդերը հասկացել էին Նազիկի այդ կողմը լինելը։

Այժմ կանոնավոր կռիվ էր սկսվում, մտած պատնեշների ետևում։ Ուժերը անհավասար էին, բայց Պետրոսը քիչ ուրախություն զգաց։ Առաջին անգամը չէր, որ երկու քուրդի հետ կռիվ էր տալիս։

Ուրախություն զգաց. այժմ ապահով էր, որ հաղթելու էր, և մի գնդակ ուղղեց դեպի ժայռը։

Այդպես մի քանի բոպե գնդակներ սկսեցին տեղալ միմյանց վրա ընդհատ։ Պետրոսը, սակայն, չէր նկատում, որ հակառակ կողմից արձակվող հրացանը մեկն էր, փոխանակ երկուսի։

Նազիկը կծկվել էր ժայռի ետևում։

Այդպես էր դրությունը։ Դիմացից լռել էին. Պետրոսը սպասեց ինքն էլ, երբ հանկարծ ետևի կողմից թնդաց մի հրացան։ Պաշարվել էր։ Քուրդերից մեկը գաղտագողի անցել էր ետևի կողմը, մտել մի ուրիշ քարի ետև և այնտեղից գնդակահար էր անում Պետոյին։

Առաջին գնդակը, սակայն, փշրեց միայն մի կտոր քար, բայց Նազիկը գրեթե ուշաթափ եղավ։

Պետրոսը կատաղությամբ մի ոստյուն գործեց. դրան հետևեցին երկու ուրիշ ձայներ . մի գնդակ սլացավ իր կողքից, լսվեց մի աղաղակ և նա տեսավ, թե ինչպես Նազիկը ձեռքերը դեպի նա պարզեց. հետո բարձրացավ, ծնկան վրա եկավ և փռվեց ժայռի վրա։

Պետրոսի արյունը դեպի գլուխը հոսեց բուռն կերպով։ Հսկա թռիչք գործեց, հասավ քուրդին, հանեց երկար սուրը և մի այնպիսի հարված հասցրեց նրան, որ եթե քուրդը ետ չքաշվեր, անշուշտ գլխից զրկվելու էր։

— Նամերդ,— մռնչաց Պետոն և չթողեց քուրդին շարժվելու։ Գնդակները սուլում էին նրա կողքից, մեկն էլ ազդրի մեջ մտավ, բայց նա հրացանի բունով ջախջախեց քուրդի գլուխը,

դաշույնով պատառեց նրա կոկորդը և ապա նույն թռիչքով անցավ այն տարածությունը, որ իրեն բաժանում էր մյուս քուրդից։ Եվ, չնայելով դեպի իրեն ուղղած գնդակները, հասավ նրան։

Ձեռքին միայն դատարկ հրացան ուներ, բարձրացրեց և առանց խոսելու իջեցրեց քուրդի գլխին։ Սա, վահանը դեմ տվավ և դաշույնով հարձակվեց։

Պետրոսը գոտուց ատրճանակը հանեց։ Մի րոպեից հետո այդ քուրդն էլ ոտքի տակն էր, բացված կուրծքով։

Հաղթությունը Պետոյինն էր։ Եվ դաշտը մտավ դարձյալ ամայության մեջ։ Խոր լռություն տիրեց նրա շուրջը։

Կանգ առավ ու շուրջը նայեց. արյունով դեռ լեցուն էին աչքերը. խելագարի պես էր, դեռ ոչինչ չէր հիշում։ Մթությունը սաստկանում էր. հորիզոնը լիովին ծածկված էր ամպերով, կամաց-կամաց շրջակա լեռների շրջագծերն իսկ անհետանում էին։

Մենակ էր այժմ և հետզհետե գիտակցության էր գալիս, հանդարտվում էր։ Մի վայրկյան հետո նա սկսեց հիշել։

Եվ երբ հիշեց, մի խուլ, ցավալից աղաղակ դուրս թռավ նրա կոկորդից։ Վազեց դեպի ժայռը. ցած ձգեց հրացանը և չոքեց Նազիկի դիակի մոտ։

Դեռ տաք էր, բայց մեռնում էր... Սոսկալի իրողությունը նրան երազ, կոշմար էր թվում...

— Նազիկ,— գոռաց աղիողորմ ձայնով,— իմ Նազիկ...

Աղջիկը շարժվեց և բարձրացրեց թևերը. բացվեցին քիչ նրա աչքերը մի ակնթարթ... և ապա մի բուռ արյուն դուրս հոսեց բերանից։

Պետոն գրկեց, բարձրացրեց նրան։

Մի բառ անգամ չարտասանեց անբախտ աղջիկը, թեքեց գլուխը, դրեց իր սիրողի կրծքի վրա և մեռավ...

— Նազիկ,— գոչեց երիտասարդը,— աստված իմ, մի՞թե առանց քեզ եմ մնալու, մի՞թե թողնում ես ինձ...

Ու բաց թողեց գրկից, դրեց գետնին, գլուխը ժայռին դեմ տվավ, հետո բարձրացավ, մի կողմ շպրտեց գլխարկը, բաց արավ կուրծքը։ Խեղդվում էր, շունչ չէր մնում... Մի օգնություն մի ձայն գոնե. մի՞թե չէր կարելի ազատել Նազիկին, չէ՞ որ նա պատրաստ էր կյանքը տալ նրա համար...

Խոր լռություն էր տիրում ամեն կողմ. մթին ամպերը կուտակվում էին միմյանց ետևից երկնքի երեսին. մեղմ, ցուրտ քամի էր սահում–անցնում օդի միջից... Լուռ էր ամեն կողմ, ոչ մի շշուկ, ոչ մի ձայն...

Եվ մի սև մշուշ այդ ժամանակ, հառաջանում շրջափակում էր հարթավայրը, որի միջից դեռ երևում էր կուրծքն ու գլուխը բաց, հուսահատ աչքերը դեսուդեն պտտեցնող երկարահասակ երիտասարդը, որ պարբերաբար, երբեմն, աղեխարշ ձայնով, օդն էր պատառում իր գոչով.

— Նազի՛կ... —

Ու նրա քստմնեցուցիչ ձայնը տարածվում էր հեռուները որպես գիշերային թռչունի աղիողորմ ողբը...